Azg
Ազգ
3 ՆՈՅԵՄԲԵՐ 2004 ՇԱԲԱԹ 195 (3126)

ԱՄՆ գերագույն դատարանը մերժել է Ջեկ Գետրյանի վճռաբեկ գանգատը

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 2 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հայազգի բժիշկ Ջեկ Գետրյանը, որը դատապարտվել է ինֆնասպանություններին օժանդակելու մեղադրանքով եւ ազատազրկման 5 տարիներից հետո վճռաբեկ գանգատ է ներկայացրել ԱՄՆ Գերագույն դատարան, նոյեմբերի 1-ին տանուլ է տվել դատը այս առյանում: Ինչպես հաղորդում է «Ասոշիեյթեդ պրես» գործակալությունը, դատավորներն առանց մեկնաբանության մերժել են գանգատը, որում Գետրյանը հայտարարում էր, թե իր փաստաբանն արդյունավետ չի պաշտպանել իր շահերը, երբ նա 1998 թ. «երկրորդ ասիճանի սպանության» մեղադրանքով դատապարտվել է Թոմաս Յուկի թունավորման համար: Յուկը տառապում էր «Լու Գեհրիգի սինդրոմ» կոչվող ծանր հիվանդությամբ, եւ Գետրյանն իր արարքը որակել է որպես «գթության սպանություն»: Տեղի ունեցածը նկարահանվել էր եւ ցուցադրվել ազգային հեռուստատեսությամբ: Գերագույն դատարանը երկու տարի առաջ նույնպես մերժել էր Գետրյանի գանգատը, որում բժիշկը պնդում էր, թե իր նկատմամբ դատական հետապնդումը հակասում է սահմանադրությանը: Ջեկ Գետրյանը հայտնել է, որ օժանդակել է առնվազն 130 հիվանդների մահվան, սակայն խոստացել է, որ ազատ արձակվելու դեպքում այլեւս չի օժանդակի որեւէ ինֆնասպանության: Նա ենթակա կլինի պայմանական վաղաժամկետ ազատման 2007 թ. ոչ շուտ:

«Ադրբեջանը փորձում է ղարաբաղյան կարգավորման գործընթացը վերածել քարոզչական պատերազմի»

Փոխարտգործնախարար Ռուբեն Շուգարյանը մեկնաբանում է Բաքվի վերջին նկրտումները

ԹԱԹՈՒԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի փոխարտգործնախարար Ռուբեն Շուգարյանն «Ազգի» հետ զրույցում ասաց, որ Ադրբեջանը փորձում է ամեն ինչ անել, որպեսզի ղարաբաղյան կարգավորման գործընթացը վերածվի քարոզչական պատերազմի: Հոկտեմբերի վերջերին պաշտոնական Բաքվի նախաձեռնությամբ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի օրակարգ մտավ «Ադրբեջանի գրավյալ տարածքներում տիրող իրավիճակի» հարցը:

«Այսօր Ադրբեջանը փորձում է ամեն ինչ անել, որ ղարաբաղյան կարգավորման գործընթացը վերածվի քարոզչական պատերազմի, երկրորդ՝ փորձում է ԵԱՀԿ ձեւաչափից հարցը տեղափոխել տարբեր միջազգային առյաններ, այդ թվում՝ ՄԱԿ եւ ուշադրությունը շեղել բուն, իրական պրոբլեմներից», ասաց Շուգարյանը:

Ադրբեջանի կողմից «գրավյալ տարածքներում առկա իրավիճակի» խնդիրը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 59-րդ նստաշրջանի օրակարգ մտցնելու քվեարկությանը ՄԱԿ-ի 191 անդամ պետություններից ադրբեջանական նախաձեռնությանը կողմ է քվեարկել 43 երկիր, 99-ը մնացել է ձեռնպահ, մոտ 5 տասնյակ երկիր չի մասնակցել քվեարկությանն ընդհանրապես:

«43 կողմ երկրներից 34-ն իսլամական ինստիտուցիոնալ կառույցների (խոսքն առաջին հերթին Իսլամական կոնֆերանս կազմակերպության մասին է) երկրներ են, որտեղ կա որոշակի համերաշխություն: Ինստիտուցիոնալի վրա շեշտ եմ դնում, որովհետեւ խոսքը իսլամֆրիսոնյա հակամարտության մասին չէ:

Տես էջ 3

«Կառավարությունը 7 մլն դոլարով ծախում է մեր երեխաների առողջան»

Ասում է Արշակ Սադոյանը

ԿԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Արդեն մի քանի շաբաթ «Ազգային ժողովրդավարական դաշինք» միության նախագահ Արշակ Սադոյանը ջանքեր է գործադրում իրազեկելու այն դավադրությունը, որ, նրա համոզմամբ, նյութվում է հասարակության դեմ՝ «Արմենտելի» հետ կապված գործարքում: Արդեն 6 տարի պատգամավորն ուշի-ուշով հետեւում ու հետազոտում է հեռահաղորդակցության համակարգում տիրող իրավիճակը, եւ իր ներկայացմամբ, այս ասպարեզում կաշառքի ու կաշառակության բազմաթիվ փաստեր են արձանագրվել: Հերթական փաստը նա ներկայացնում է՝ խորհրդավորության քողով պատած: Ավելի ճիշտ հարկադրված է այդպես վարվել, որովհետեւ իրեն համապատասխան տեղեկություն հաղորդած մարդկանց կյանքին վտանգ է սպառնալու: Նրանք երկուսն էլ, մեկը մյուսից անկախ նույն տեղեկությունն են հաղորդել, թե կառավարության մի ներկայացուցչի (թե ներկայացուցիչների), «Արմենտելը» կաշառք է տվել՝ մի աղբյուրի համաձայն՝ 5 մլն դոլար, մյուսի համաձայն՝ 7 մլն դոլար, որպեսզի ձգձգվի վերջինիս ինտերնետային մենաշնորհից զրկելու ակցիան: Կաշառքը լինելու է այլ ֆիրմաներում բաժնետոմսերի տրամադրման միջոցով: Գործարքը դեռեւս չի կայացել, քանի որ «Արմենտելը» սպասում է վստահելի երաշխիքների: «Վախենում են, որ կաշառքը կվերցնեն, բայց գործը չեն անի»: Զգձգման այդ ժամանակաընթացքը «Արմենտելին» հարկավոր է բաժնետոմսերի մի մասն այլ ընկերության վաճառելու համար: Եթե հասցնի վաճառել, ապա, օտարերկրյա ներդրումների օրենքով նոր գնորդը «Արմենտելի» հետ եւս 5 տարով մենաշնորհ ունենալու իրավունք է ստանում:

Տես էջ 2

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրողների աննախադեպ ակտիվություն ԱՄՆ-ի ողջ տարածքում

Երեկ երեկոյան Մ. Նահանգներում սկսվեցին նախագահական ընտրությունները, որոնց այս անգամ մասնակցում են քվեարկողների առավել մեծ բազմություններ: Հատկանշական է մանավանդ երիտասարդ քվեարկողների ակտիվությունը, ինչն աննախադեպ է այս երկրում: Պատճառը, ոմանց կարծիքով, 2000 թ. ընտրությունների թողած տպավորությունն է, որտեղ գործող նախագահին իր մրցակցին հաղթեց ընդամենը մի քանի հարյուր ձայնով: Ոմանք մարդկանց ակտիվությունը պայմանավորում են ահռելի քարոզչությամբ, որը մրցակից կողմերը կազմակերպեցին ամիսներ շարունակ՝ ծախսելով հսկայական գումարներ:

Իրավամբ ասում են, որ ամերիկյան ընտրությունները հսկայական շոու է: Դա առավել ցայտուն երեւաց այս ընտրություններում: Գլխավոր հերոսները՝ նախագահության եւ փոխնախագահության թեկնածուները, մինչեւ վերջին պահը շարունակեցին քարոզչությունը, ավելի շուտ՝ շոուները, սկսած «բեյբի ֆիսինգից» (երեխաներին գրկել եւ համբուրել) մինչեւ տիկնոջ ու երեխաների հետ բազմության առջեւ հանդես գալը:

Նախագահ Ջորջ Բուշն իր քվեաթերթիկը նետեց հայրենի Թեքսասի նահանգի Կրոուֆորդ բնակավայրի հրեջ կայանում գտնվող ընտրական տեղամասում, մինչ այդ մեկ անգամ եւս հանդիպելով խնդրահարույց Օհայո նահանգի իր ընտրողների հետ:

Սենատոր Ջոն Քերին հանդիսավոր մուտք գործեց հայրենի Մասաչուսեթս, քարոզչական կանգառ կատարեց տարբեր քաղաքներում եւ ի վերջո ուղղվեց դեպի Բոստոն, որտեղ գցելու էր իր քվեն:

Այսուհանդերձ, քվեարկությունների առաջին պահից երեւացին քվեարկության էլեկտրոնային մեքենաների թերությունները, դրան հետեւեցին ընտրական որոշ անկանոնությունների արձանագրություններ: Մրցակից կողմերն արդեն ամբաստանում են միմյանց: Ձողային մթնոլորտ է մի շարք քաղաքներում: Դիտորդներն արդեն կանխատեսում են հետագա բարդություններ:

Այսօր կեսօրվանից սկսյալ կհրապարակվեն նախնական արդյունքները:



Չեն թողնելու անգամ բազմանանք

«Հայ արիական միաբանության» նախագահ Արմեն Ավետիսյանը, որ վերջին շրջանում հանրահայտ դարձավ սեռական կողմնորոշումների վերաբերյալ սենսացիոն հայտարարություններով, օրերս իր հրապարակային ելույթներից մեկի ժամանակ մեկ այլ, ոչ պակաս ուշագրավ հայտարարություն արեց: Ըստ նրա Ամերիկայում նոր աղանդ է հայտնվել, որի հետեւորդները մերժում են ամեն տեսակ սեռական հարաբերությունները՝ «որովհետեւ տեսնում են, պատերազմներով չեն կարողանում վերացնել ազգերին, որոշել են այդ ճանապարհով վերացնել»:

Արմեն Ավետիսյանը հավանական է համարում նաեւ այդ աղանդի հայտնվելը Հայաստանում, որովհետեւ «մեր պետության մեջ ոչ մի նորմալ մարդ օրենքով պաշտպանված չէ, բայց աղանդավորները, համասեռամոլները, ամենաստարբեր մոլագարները ամենից շատ իրավունքներ ունեն»:

Արմեն Ավետիսյանի ասելով նույնիսկ հանրակրթության ոլորտն են թափանցել սեռական կողմնորոշումների նկատմամբ զիջողամիտ վերաբերմունք ցուցաբերելու ազգային քարոզները: «Ուր ենք հասել, որ կառավարական շրջանակներում վխտացող այդ այլանդակները, նման դասագրքեր ներմուծելով, արդեն փորձում են ազդել մեր եկող սերնդի հոգեբանության վրա: Մենք հիմա փորձում են հասարակական կարծիք ձեւավորել նրանց դեմ, այո, մենք անուններ տալու ենք եւ ոչ միայն անուններ: Նրանց պիտի հրապարակային վառել, նրանց ներել չի կարելի», առանց կոնկրետանալու արդեն քանիցս սպառնաց նա:

Կ. Դ.

Էջմիածնի հոգեւոր ճեմարանը 130 տարեկան է

Վաղը կլրանա Էջմիածնի Գետրգյան ճեմարանի 130-ամյակը: Մի փոքր բացենք ճեմարանի պատմության էջերը զուգահեռներ անցկացնելով այժմյանի հետ: Էջմիածնի հոգեւոր ճեմարանը հիմնվել է 1874 թվականին Գետրգ IV կաթողիկոսի կոնդակով, նրա անունով էլ կոչվել է: Նպատակն էր պատրաստել հայ եկեղեցու սպասավորներ: 1917 թվականին այն հարկադրված փակվեց: 1925-ին Գետրգ V կաթողիկոսը փորձեց համոզել կոմունիստական իշխանություններին վերաբացել ճեմարանը, բայց ապարդյուն: Եվ միայն 1945-ին Գետրգ Չորեքյանի գործադրած ջանքերի շնորհիվ բացվեց: Տեղավորվեցին նախկին Մատենադարանի շենքում, 1995 թ. տեղափոխվեցին այժմյան շենք: Հիմք դրած ավանդույթները գրեթե չեն փոխվել: Ինչպես եւ առաջ այժմ էլ կանոնադրությամբ ճեմարանն Ամենայն հայոց կաթողիկոսի տնօրինության ներքո է, այսինքն՝ նա է վերատեսուչը: Ճեմարանի տեսուչին նշանակում է կաթողիկոսը: Արդեն 5 տարի ճեմարանը ղեկավարում է տեր Եղիշե ավագ քհն. Սարգսյանը:

Տես էջ 3

ԸՆԹԱՑԻԿ

Լիցենզիայի փոփոխությամբ «Արմենտելը» կմտնի կարգավորման դաշտ

Ինչպես նաեւ պարտավորված կլինի ինտերնետ հեռախոսակապ մատակարարել

Վաղը կառավարությունը պետք է վերջնական վճիռ կայացնի «Արմենտելի» շուրջ ՕՏԵ ընկերության հետ բանակցությունների արդյունքների առնչությամբ: Հերթական հետաձգումն, ամենայն հավանականությամբ, տեղի չի ունենա: Անցած 10 օրը թերեւս բավարար ժամանակահատված էր կողմնորոշվելու համար, թե արդյոք զիջումներն ու ձեռքբերումները համարժեք են միմյանց եւ ինչ հետեւանքներ կլինեն համաձայնագիրը հաստատելու կամ մերժելու դեպքում: Համենայն դեպս, բանակցությունների անմիջական մասնակից արդարադատության նախարարությունում համոզված են, որ ՕՏԵ-ի հետ ձեռք բերվածը փոխզիջում է:

Մինչ բանակցությունները, հասարակության համար գլխավոր հարցը մի կողմից բողեավճարի թանկացման եւ անվճար խոսակցության ժամանակահատվածի կրճատման, մյուս կողմից՝ բջջային կապի եւ միջազգային ելքի մենաշնորհի վերացմանն էր վերաբերում: Արդարադատության նախարարի խորհրդական **Գետրգ Կոստանյանը** վերջին հիշատակեց, որ բողեավճարի կիրառումն, ըստ «Արմենտելին» տրված թ. 60 լիցենզիայի, նախատեսված էր 1999 թ-ի հունվարի 1-ից: Մինչ այժմ դա տեղի չի ունեցել, քանի որ Հայաստանի կառավարությունը, չցանկանալով թույլ տալ սոցիալական պայթյուն, ամեն կերպ հետաձգել է բողեավճարի կիրառումը: Այս պայմանավորվածությունների արդյունքում բողեավճարի ներկայիս սակագներն ու խոսելու ժամանակահատվածը գրեթե մնացին անփոփոխ: Նախարարի խորհրդականը նշեց, որ չնայած կառավարությունը մեղադրում էր «Արմենտելին» ներդրումային պարտավորությունները չկատարելու մեջ, բայց մյուս կողմից բողեավճարի կիրառումը հետաձգելով, «Արմենտելին» հնարավորություն էր տալիս ներդրումային պարտավորությունների չկատարումը բացատրել հենց այս հանգամանքով: Միջազգային ելքի (տվյալների փոխանակման) ոլորտում նույնպես նախապես նշվում էր մենաշնորհը վերացնելու մասին, բայց ձեռք բերված համաձայնագրով դա տեղի չունեցավ: Փոխարենը, «Արմենտելին», լիցենզիայի նոր խմբագրմամբ, կոնկրետ քայլերով պարտավորեցվում էր ապահովել ինտերնետ պրովայդերների բնականոն գործունեությանն անհրաժեշտ պայմանները: Եվ ընդհանրապես, «Արմենտելի» մասնակիցը կարծիք կարող է հիմք հանդիսանալ միջազգային դատարանի համար: Այդ դեպքում սպացվում է, որ կառավարությունը չի կատարել «Արմենտելի» բացառիկ իրավունքները պաշտպանելու իր պարտավորությունները, որի դիմաց նա պետք է փոխհատուցի ընկերության կորուստները, որոնք հարյուր միլիոնավոր դոլարներ կկազմեն: Իհարկե, բանակցությունները նախընտրելի է համարել նաեւ հունական կողմը: Դա բացատրվում է ՕՏԵ-ի ղեկավարության փոփոխությամբ, Հայաստանի կառավարության հետ առանց բախումների աշխատելու նրա ցանկությամբ, ինչպես նաեւ «Արմենտելի» կողմից ներդրումային պարտավորություններից շատերի չկատարմամբ:

Ինչ վերաբերում է ինտերնետ հեռախոսակապի հետագա ճակատագրին, արդա լիցենզիայի նոր խմբագրմամբ «Արմենտելը» պարտավոր է մատուցել այդ ծառայությունը: Գետրգ Կոստանյանն ընդգծեց՝ պարտավոր է եւ պարտավոր է մատուցել նույն ծավալով, ըստ պահանջարկի, դարձյալ կարգավորողի սահմանած սակագներով: Իսկ եթե չմատուցի, արդա այդ ծառայության մատուցումը կարգավորող մարմինը կարող է տրամադրել այլ ընկերության:

ԱՐԱ ՏԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«Կառավարությունը 7 մլն դոլարով ծախում է մեր երեխաների ապագան»

1-ին էջից

1999 թ. սահմանադրական դատարանի որոշմամբ «Արմենտելը» մենաշնորհից պետք է զրկվեր դեռ 2003 թվականի մարտի 5-ից: Ձգձգվող բանակցությունները միայն մի նպատակ ունեն՝ չզրկել նրան հարստության ոսկե եղջյուրից: Ինտերնետային հեռախոսակապը տարեկան 18-20 մլն դոլարի եկամուտ է ապահովում, չհաշված որ կոչնչացվեն ոլորտում զբաղված ինտերնետային էժան կապ ապահովող 250 մասնավոր ընկերությունները: Դա նշանակում է, մեղմ ասած, սահմանափակել դրսի աշխարհում հարազատներ ունեցող բնակչության հաղորդակցման հնարավորությունը, որը էժան կապի առկայությամբ գոնե կարողանում էր կապ պահպանել մերձավորների հետ:

Արշակ Սադոյանի բնորոշմամբ, կառավարությունը ազգադավ արարք է իրականացնում, քանի որ «7 մլն դոլարով վաճառում է մեր եւ մեր երեխաների ապագան»: Ըստ ԱԺԴ ղեկավարի, «Արմենտելի» ողջ պատմության ընթացքում թե՛ Հունաստանի դեսպանի մակարդակով, թե՛ «Արմենտելի» ղեկավար անձերի, փորձեր են արվել իրեն եւ կաշառելու միջոցով վնասազերծել: Կաշառել են նաեւ վերեւներին: Անկեղծության պահին մի անգամ Յորդանանը նույնիսկ դժգոհել է.«Ամեն տարի մի քանի մլն դոլար կաշառ ենք տալիս, այդպես չի կարելի»:

Արշակ Սադոյանը ակնկալում է ողջ հասարակության աջակցությունը՝ հինգշաբթի օրը, ժամը 11-ին նա բոլորին հրավիրում է կառավարության շենքի մոտ՝ «թույլ չտալու, որ 7 մլն դոլարով վաճառեն մեր ու մեր երեխաների ապագան»: Արշակ Սադոյանը չի պատրաստվում հրաժարակել նաեւ կառավարության այն ներկայացուցչի անունը, ով անմիջականորեն առնչվում է կաշառատվության գործընթացին: Չի պատրաստվում նաեւ զգուշացնել հակակոռուպցիոն զանազան կառույցներին ու հանձնաժողովներին, ոչ միայն որովհետեւ չի վստահում նրանց: Պանկության դեպքում նրանք իրենք պիտի հետաքրքրություն ցուցաբերեին:

Իբրեւ ապահովագրության ու անվտանգության երաշխիք Սադոյանի եւ նրան տեղեկություն հաղորդողների զրույցը տեսագրվել է, պահվել հատուկ սեյֆում, որպեսզի եթե մի բան պատահի, իրենց ներկայացուցիչները ցուցադրեն տեսաժապավենը:

ԿԱՐԻՆԵ ՂԱՆԻՆՅԱՆ

ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աղբի վերամշակումը բնապահպանական եւ ֆինանսական շահույթ է ենթադրում

Աղբի վերամշակման հեռանկար ունի նաեւ Հայաստանը

Հայաստանում, ուր առանց այն էլ հողը մեծ խնդիր է, այսօր կան 60 աղբավայրեր, ինչը կրկնակիից էլ ավելի է նույն տարածքն ունեցող զարգացած երկրների համեմատ, որտեղ աղբավայրերը 15-20-ն են: Դա արդյունք է կոշտ կենցաղային թափոնների վերամշակման, որը ոչ միայն բնապահպանական, այլեւ ֆինանսական տեսանկյունից շահավետ է:

Այսօր Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր բնակիչ տարեկան կտրվածքում կուտակում է 370-450 կգ աղբ, իսկ հանրապետության նույն կտրվածքի ցուցանիշը 1,3 մլն խմ է: Այսինքն՝ վերամշակման բավական հումք կա, խնդիրը շահութաբեր գործի նախնական կապիտալի մեջ է: Այն ձեռք բերելու եւ ոլորտը ֆիզ թե շաս կառավարելի դարձնելու համար, ինչպես տեղեկացրեց ՀՀ քաղաքաշինության փոխնախարար **Կառլեն Գետրգյանը,** այժմ բանակցություններ են ընթանում նախարարության ու երկու խոշոր կազմակերպությունների միջեւ եւ երկուստեք ուսումնասիրություններ են կատարվում գործարքի շահեկանության պարզման ուղղությամբ: Բանակցություններից զատ, փոխնախարարի հավաստմամբ, ժամանակ եւ աշխատանք կպահանջեն նաեւ օրենսդրական անհրաժեշտ փոփոխությունները: Կարեւոր է նաեւ կոմունալ ծառայությունների, տվյալ դեպքում՝ աղբահանության, սակագների հստակ սահմանումն ու համակարգումը: Առաջինը, ըստ փոխնախարարի, ցածր է եւ սահմանվում է տարեցայնորեն, երկրորդն իրականացվում է մասնակի, հավաքված գումարն էլ նպատակային չի օգտագործվում, հավատացած է Կառլեն Գետրգյանը: Թվարկված խնդիրների կրճատմանն ու վերջնական լուծմանն է ուղղված նոյեմբերի 2-4-ը ՀՀ քաղաքաշինության նախարարության, տնտեսական համագործակցության եւ զարգացման միջազգային կազմակերպության, COWI consult դանիական ընկերության երեւանում կազմակերպած սեմինարը: Նշված կազմակերպությունների փորձագետներն ու մասնագետները Հայաստանի, Վրաստանի, Ուկրաինայի, Ղրղզստանի կոմունալ ոլորտը կառավարող պատասխանատուներին սեմինարի ընթացքում պետք է ներկայացնեն կոշտ կենցաղային թափոնների կայուն կառավարման համակարգի ձեւավորման միասնական պետական քաղաքականության մոդելը: Այն արդեն մշակվել եւ ներդրվել է Լատվիայում եւ Ռուսաստանի Դաշնության մի քանի մարզերում: Տնտեսական համագործակցության եւ զարգացման միջազգային կազմակերպության ավագ մենեջեր **Այնխանոյ Մարդուսեւիչի** վստահեցմամբ, ծրագրի մշակման համար անհրաժեշտ է մեկուկես տարի, բայց այն կգործի առաջիկա 15 տարիներին՝ առաջին հերթին լուծելով ճիշտ ֆինանսավորման եւ կոմունալ սպասարկման պատասխանատու բոլոր մակարդակների շաղկապված ու համահունչ աշխատանքը:

ՆԱՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ



Սոցիալական ծառայություններ մեկ կանգառում

Այստեղ Մասիս քաղաքի եւ հարակից գյուղերի բնակիչները հնարավորություն ունեն սոցիալական ոլորտի բոլոր խնդիրներով դիմելու Մասիսի սոցիալական ծառայությունների համալիր կենտրոն: Առաջին կենտրոնը բացվել է Վանաձորում, սա հանրապետությունում մոդելի կիրառման երկրորդ դեպքն է: Ծրագիրը նախատեսում է մեկ շենքում միավորել Սոցաշ պետական հիմնադրամի տարածքային կենտրոնը, բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովը, սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունը, զբաղվածության տարածքային կենտրոնը եւ տեղական հասարակական կազմակերպությունները, ինչը համակարգված է դարձնում ոլորտի մասնագետների հետ քաղաքացիների աշխատանքը: Սոցիալական ծառայությունների համալիր կենտրոնի ընդունարանում ոլորտի կառույցների մեկական ներկայացուցիչ այցելուներին առաջնային տեղեկություն կտրամադրի, արդա ըստ անհրաժեշտության նրանց կառաջնորդեն համապատասխան ծառայություն:

Սոցծառայությունների համալիր կենտրոնների հիմնումը ներառվել է այն ծրագրերի ցանկում, որոնք պատրաստվել են՝ ներկայացնելու «Հազարամյակի մարտահրավերների կորպորացիային»: Հայաստանը տարածաշրջանի առաջին երկիրն է, որը փորձարկում է այս մոտեցումը: Երեկ կենտրոնի բացմանը Հայաստանում ԱՄՆ դեսպան **Ջոն Էվանսն** ասաց, որ մոդելը հետաքրքրել է ոչ միայն տարածաշրջանի, այլեւ Մոլդովայի, Բուլղարիայի, Ռումինիայի, եւ որոշ անդամ երկրների փորձագետներին: «Նման ծրագրերը հատկապես ուղղված են կարիքավորներին, թոշակառուներին, հաշմանդամներին, գործազուրկներին: Վաղը մենք սրանցից այս կամ այն խմբում ենք լինելու, նշանակում է՝ նման կենտրոն ստեղծելով մենք մեր մասին ենք մտածում», ասաց ԱՄՆ դեսպանը:

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար **Արվան Վարդանյանն** ասաց, որ պետությունն իր առջեւ խնդիր է դրել այս մոդելը ողջ հանրապետությունում տարածել: «Առաջին փուլում մենք փորձում ենք ներգրավել այնպիսի քաղաքներ, որտեղ ծառայությունների գոնե մեծ մասը մեկ շենքում է եղել, որպեսզի կազմակերպչական, վերանորոգման աշխատանքներն ավելի դյուրին լինեն, ասաց նախարարը: Իմ երազանքն է, որ հնարավորություն ունենանք հատուկ նախագծով սոցիալական ծառայությունների համալիր կենտրոն կառուցելու բոլոր մարզերում»: Ինչ վերաբերում է Երեւանին, որն Վարդանյանն ասաց, որ այստեղ գուցե 10-12 նման կենտրոնի անհրաժեշտություն լինի:

Կենտրոնի կարեւորագույն առանձնահատկություններից է տվյալների փոխանակման համակարգչային ծրագիրը, որը մշակել է «Նորֆ» կենտրոնը՝ USAID/PADKO Հայաստանի սոցիալական բարեփոխումների ծրագրի աջակցությամբ: Համակարգչային ծրագիրը գրասենյակներից յուրաքանչյուրին հնարավորություն է տալիս պետական սոցծառայությունների տվյալների բազաներից որոշակի տեղեկություն ստանալ, ինչը նպաստում է հաճախորդներին մատուցվող ծառայությունների արդյունավետության բարձրացմանը:

Աղվան Վարդանյանը հավաստիացրեց, որ կարճ ժամանակ անց Մասիս քաղաքի, հարակից գյուղերի բնակիչները կզգան համալիր կենտրոնի առավելությունները: «Մենք սոցիալական ոլորտում ներդնում ենք ժամանակակից տեխնոլոգիաներ, որը մեր վաղվա օրն է», ասաց նախարարը:

ԹԱՄԱՐ ՄԵԼՔՈՍՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ՀՊ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 1 562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Լրագրողների սենյակ / հեռ. 581841
Հանձնարար. ծառայություն / հեռ. 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայություն / հեռ. 529353
Հանձնարարագրային բաժանմունք
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական եւ մասնակի արտատպումները տրագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռարձակությամբ առանց խմբագրության գրաւոր համաձայնության խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Նախապայմանները փակուղի են տանում

ԼՂՀ արտգործնախարարի ասուլիսից

ԼՂՀ արտգործնախարար Ատոմ Դուլյանը ԱՄՆ կատարած այցից հետո վերադառնալով, երեկ հավիրեց մամուլի ասուլիս: Նշելով, որ 10-օրյա իր այցը Միչիգանի համալսարանի հրավերով էր, նա տեղեկացրեց լրագրողներին, որ այդ այցի շրջանակներում ինքն ունեցել է նաեւ մի շարք հանդիպումներ ուրիշ քաղաքներում՝ հասարակական-քաղաքական տարբեր կառույցների ներկայացուցիչների հետ: Նախարարն անդրադարձավ ամենակարեւոր հանդիպումներին: Մասնավորապես, Ա. Դուլյանի խոսքերով, ինքը հանդիպումներ է ունեցել ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկյան համանախագահ Սթիվեն Մանի, կոնգրեսականների աշխատակազմերի ներկայացուցիչների, Ամերիկայի հայկական համագումարի անդամների, ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչի հետ եւ այլն: Բոլոր հանդիպումներն էլ, նախարարի գնահատմամբ, եղել են օգտակար եւ երկուստեք փոխշահավետ:

Անդրադառնալով Միչիգանի համալսարանի կազմակերպած կոնֆերանսին, որտեղ ելույթ էր ունեցել, Ա. Դուլյանն ասաց, որ ինքն արծարծել է ղարաբաղյան հիմնախնդիրը բոլոր կողմերով՝ հակամարտության նախապատմություն, ընթացք, պետական շինարարություն եւ այլն: Այդ եւ մյուս քաղաքներում՝ Նյու Յորք, Դետրոյթ, Չիկագո, ունեցած հանդիպումներում ելույթները նույնպես եղել են ըստ նշանակության՝ ներառելով ինչպես ռազմաքաղաքական, այնպես էլ պետականաշինության, տնտեսության ոլորտները:

Ա. Դուլյանը այս համատեքստում կարեւորեց ՀԲԸՄ կենտրոնական գրասենյակում ունեցած հանդիպումը Լոփզ Սիմոն Մանուկյանի հետ: Լրագրողներին հիշեցնելով ՀԲԸՄ պատվիրակության վերջերս կատարած այցը Արցախ՝ նա նշեց, որ այս կառույցը ԼՂՀ-ի հետ համագործակցության մեծ ներուժ ունի, որի շուտափեյի արդյունքը մի շարք գործնական դրսեւորումներում արդեն իսկ առկա է: Սփյուռքում մեծ հետաքրքրություն կա Արցախի այսօրվա վիճակի եւ հիմնախնդրի քաղաքական լուծման հեռանկարի նկատմամբ:

Նախարարը ուրախությամբ նշեց, որ այս տարվա հեռուստամարաթոնը, ըստ իր ունեցած ակնկալումների, պետք է որ ավելի արդյունավետ լինի, քան նախորդ տարիներին էր:

Ա. Դուլյանը նաեւ պատասխանեց լրագրողների հարցերին: Մասնավորապես այն հարցին, թե ինչպես կմեկնաբաներ Ադրբեջանի փոխարտգործնախարար Արազ Ազիմովի հրաժարվելը կոնֆերանսին մասնակցելուց, ԼՂՀ արտաքին գերատեսչության ղեկավարն ասաց, որ ինքը դա գնահատում է որպես Ադրբեջանի կողմից պարբերաբար ձեռնարկվող հերթական

խուսանավում՝ տվյալ դեպքում կոնֆերանսի ընթացքին խոչընդոտելու փորձ: Ա. Դուլյանի խոսքերով, կոնֆերանսի ծրագրում ներառված էր 9 հարց, որոնցից միայն մեկն էր Ղարաբաղի վերաբերյալ: Միեւնույն ժամանակ ծրագրով նախատեսված էր նաեւ վերջինիս ելույթը հարավկովկասյան տարածաշրջանում արտաքին քաղաքական խնդիրների շուրջը: Նա ցավ հայտնեց, որ Ադրբեջանը փոխանակ նպաստելու հիմնախնդրի վերաբերյալ միջազգային հանրության ճիշտ ընկալումներին, ընդհակառակը, ձգտում է ապակողմնորոշելով ձախողել բոլոր հեռանկարային ձեռնարկումները: Այս համատեքստում մեկնաբանելով Ադրբեջանի պահանջով ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի Գլխավոր հանձնաժողովի հանձնարարականը «Ադրբեջանի գրավյալ տարածքներում առկա իրավիճակի հարցի մասին», Ա. Դուլյանն ասաց, որ եթե Ադրբեջանն այս խնդիրը դիտարկեր այլ հարթության վրա, ապա թերեւս կարելի կլիներ հասկանալ նրան: ԼՂՀ արտգործնախարարի խոսքերով, հայկական կողմին նույնպես հետաքրքրում է, թե ինչ է կատարվում Ադրբեջանի կողմից գրաված տարածքներում՝ դուրս կորզել իրեն շահավետ մասը՝ նախապայմաններ դնելով, ինչը դեպի փակուղի է տանում:

Լրագրողների խնդրանքով Ա. Դուլյանն անդրադարձավ նաեւ Մինսկի խմբի համանախագահ Սթիվեն Մանի հետ հանդիպման որոշ մանրամասների: Ըստ Ա. Դուլյանի, Ս. Մանը գտնում է, որ հակամարտող երկու կողմերի հասարակական երկխոսությունն անհրաժեշտ է, որովհետեւ հասարակությունների մեջ թշնամանք սեռմանելը միայն ավելի է խորացնում հիմնախնդրի տարընկալումը:

Հարց եղավ բանակցություններում Թուրքիայի մասնակցության հնարավորության մասին: Այս կապակցությամբ Ա. Դուլյանը նշեց, որ Միչիգանի կոնֆերանսում նման հարց արծարծվել է, որին հակադարձվել է Իրանի ոչ պաշտոնական մի կառույցի ներկայացուցչի տեսակետը՝ թե այդ դեպքում Իրանը եւս, որպես տարածաշրջանում շահագրգիռ կողմ, բանակցություններին մասնակցելու իր իրավունքը կարող է ունենալ, մանավանդ որ Թուրքիայի դիրքորոշումը ոչնչով չի տարբերվում Ադրբեջանի դիրքորոշումից:

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

«Ադրբեջանը փորձում է ղարաբաղյան կարգավորման ...»

1-ին էջից

Հայաստանը միշտ տեսել է, որ սա կրոնական հակամարտություն չէ եւ ամենավտանգավորը ղարաբաղյան հակամարտության կրոնական հակամարտության բնույթ տալու փորձերն են», ասաց Հայաստանի փոխարտգործնախարարը:

Ադրբեջանական նախաձեռնությանը դեմ են արտահայտվել Ֆրանսիան՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի անունից, Նիդեռլանդները՝ Եվրամիության անունից: ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական 5 անդամներից ոչ մեկը չի աջակցել Ադրբեջանի նախաձեռնությանը, իսկ ոչ մշտական 10 անդամներից միայն Պակիստանն է սատարել Բաքվին: Ադրբեջանին պաշտպանել են ԱՊՀ անդամ 6 երկրներ, այդ թվում՝ Ուկրաինան, Մոլդովան, Թուրքմենստանը, Ուզբեկստանը, ինչպես նաեւ Ղազախստանն ու Կիրգիզիան, որոնք նաեւ Հավաքական անվտանգություն կազմակերպության անդամ են: Ուշագրավ է, որ Վրաստանը վերջին տարիներին միջազգային ասյաններում գրեթե միշտ աջակցում էր Ադրբեջանին՝ Ղարաբաղի հետ կապված հարցերում, իսկ այս անգամ չի աջակցել ՄԱԿ-ում ադրբեջանական նախաձեռնությանը:

Ի դեպ, երեկ հատուկ հայտարարություն է տարածել Ռուսաստանի արտգործնախարարությունը: Մոսկվայում կարծում են, որ ԵԱՀԿ-ի հետ գուգահեռ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում «Ադրբեջանի գրավյալ տարածքներում տիրող իրավիճակի» հարցի քննարկման նախաձեռնությունը դժվար թե բարերար ազդեցություն ունենա բանակցային գործընթացի վրա:

«Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղի կարգավորման բանակցային գործընթացին, ապա Ռուսաստանը շահագրգռված է այդ հարցի շուտափույթ կարգավորմամբ եւ ամեն կերպ նպաստում է դրան՝ լինի դա երկկողմ շփումների եղանակով, թե ԵԱՀԿ ՄԽ համանախագահի կարգավիճակով: Կարծում ենք, տվյալ խմբի ձեւաչափը թույլ է տալիս լուծել ԼՂ հակամարտությունը, եւ խաղաղությանը հասնելու գործում առաջընթացի ապահովմանը վերաբերող ամեն մի խնդիր: Բացի այդ, Ադրբեջանի եւ Հայաստանի նախագահների վերջին հանդիպումը նկատելի դարձրեց բանակցությունների վերսկսման հեռանկարները», ասվում է ՌԴ արտգործնախարարության տարածած հայտարարությունում:

Ավելի վաղ, ԼՂ հարցով Ռուսաստանի նախկին բանագնաց Վլադիմիր Կազիմիրովը հայտարարել էր, որ Բաքուն փորձում է միջազգային հանրության ուշադրությունը շեղել հակամարտության պատճառից՝ Ղարաբաղի կարգավիճակից: Հայաստանի արտգործնախարարությունը հաստատել է, որ կարգավիճակի վերաբերյալ ամբողջական քննարկումներից հանված առանձին հարցեր, որոնց վրա Ադրբեջանը ցանկանում է հրավիրել միջազգային հանրության ուշադրությունը, նա պետք է քննարկի ուղղակիորեն Լեռնային Ղարաբաղի հետ:

«Ցավոք, Ադրբեջանի այս քարոզչական պատերազմի պատճառով մենք զբաղված ենք այդ քայլի արձագանքի մշակմամբ», «Ազգի» հետ զրույցում ասաց փոխարտգործնախարար Շուգարյանը, որն, ի դեպ, հոկտեմբերի վերջերին մասնակցել եւ ելույթ էր ունեցել Միչիգանի համալսարանում կազմակերպված կոնֆերանսում, որը վերաբերում էր Հարավային Կովկասին, ՀՀ արտաքին քաղաքականությանը եւ Ղարաբաղի հարցին: Շուգարյանի ադրբեջանցի գործընկեր Արազ Ազիմովը նախ համաձայնություն էր տվել, ապա հրաժարվել մասնակցությունից՝ պատճառաբանելով, թե կոնֆերանսում ներկայացված է նաեւ Լեռնային Ղարաբաղը: Սա մեկ անգամ եւս ապացուցում է, որ ադրբեջանական կողմը լրջորեն շահագրգռված չէ ղարաբաղյան խնդրի կարգավորմամբ, որին հասնելու ամենահրատապ ճանապարհներից մեկը հենց Ղարաբաղի իշխանությունների հետ շփումներն են:

Շուգարյանը կարծում է, որ ադրբեջանական կողմը չմասնակցելով, ինքն է շատ բան կորցնում: «Ամենակարեւորն, իմ կարծիքով, այն է, որ այդ կոնֆերանսին մասնակցեց ԼՂՀ արտգործնախարար Ատոմ Դուլյանը: ԼՂ-ն ներկայացված էր արտգործնախարարի մակարդակով, իսկ ելույթը՝ ԼՂ հարցի կարգավորման տարբեր փուլերին էր վերաբերում: Դա ամփոփիչ եւ հատուկ զեկուցում էր», ասաց Շուգարյանը:

ՄՍՄՈՒԼ

Ղգամյա «Արեւածաղիկը»

«Արեւածաղիկ» մանկապատանեկան ամսաթերթը 5 տարեկան է: 5 տարի շարունակ ամսագրի հետ կապված բոլոր աշխատանքները կատարում են հաշմանդամ եւ ոչ հաշմանդամ երեխաներն ու պատանիները: Այն բաժանվում է հանրապետության դպրոցներում: Ամսագրի նախաձեռնողները մեկ նպատակ ունեն՝ միաձուլել մեր հասարակությունը, քանի որ անկախ ֆիզիկական կարողություններից, բոլորն էլ մեկ մեծ հասարակության անդամ են: «Արեւածաղիկը հենց այդպիսի հասարակության պատկերն է: Այն մեծ ու գեղեցիկ ծաղիկ է, որի գլխիկը կազմում են նրա սերմերը՝ փոքրիկ ու մեծ, լի ու փուչ: Եվ չնայած նրանց տարբերությանը, նրանք բոլորը միասին են ու կազմում են մեկ ամբողջություն, մի ամբողջ գեղեցիկ ծաղիկ, որը միշտ ձգտում է դեպի արեւ, ջերմություն», գրված է «Արեւածաղկի» առաջին էջում: «1999-ին դարձա «Արեւածաղկի» գլխավոր խմբագիրը: Հիշում եմ, թե ինչպես պայմանագիրը ստորագրեցի, դա իմ կյանքի ամենահաճելի եւ պարտավորեցնող պահերից էր: «Արեւածաղիկը» օգնեց ինձ եւ ուրիշներին համախմբվել, նոր ընկերներ գտնել, արտահայտել մեր մտքերն ու երազանքները», ասում է գլխավոր խմբագիր Զարուհի Բաթոյանը: Պատանի լրագրողները հանդիպում են մշակույթի, քաղաքական եւ հասարակական գործիչների հետ, գրում երեխաներով զբաղվող կազմակերպությունների եւ հաշմանդամ երեխաների մասին: Նրանք համապատասխան վերաբերմունք են ձեւավորում հատուկ կարիքներով երեխաների նկատմամբ՝ ապացուցելով, որ վերջինները բաց ամենին կարող են անել, երբ ունեն ընկերներ եւ պատշաճ գործելու հնարավորություն:

ԱՐԵՎԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Էջմիածնի հոգեւոր ճեմարանը 130 տարեկան է

1-ին էջից

Ուսուցիչների ընտրությունը կատարում է տեսուչը, ներկայացնում է նորին սրբությանը՝ սահանալով նրա համաձայնությունը նրանք հրամանագրվում են: Ժամանակին այստեղ դասավանդել են Կոմիտասը, Կարա Մուրզան, Գարեգին Լեւոնյանը, Հրաչյա Աճառյանը, Մանուկ Աբեղյանը, Ատոմ Հովհաննիսյանը: Ըստ տեր Եղիշեի, մեր ժամանակներում էլ դասախոսական կազմն իր որակով բավական բարձր է: Գիտական աշխարհում ճանաչված, լավագույն մասնագետներ են ճեմարանում դասավանդում: 2003 թվականից կառավարության որոշմամբ ճեմարանը ճանաչվեց որպես բարձրագույն հաստատություն: Ճեմարանում իդեալական մթնոլորտ է տիրում: Ինչպես եւ առաջ, ճեմարանն ունի երկու բաժին՝ սեմինարական եւ լսարանական: Այստեղ 36 առարկաներ են անցնում: Օտար լեզուներն են՝ անգլերենը, ռուսերենը, հունարենը: 6 տարի են սովորում, վերջում պետական քննություն են հանձնում՝ հայ եկեղեցու պատմություն եւ ավարտաճառով հանդես գալիս: Ճեմարանն ունի համակարգչային սենյակ, որտեղ ուսանողները սովորում են բոլոր ծրագրերը խորացված ձեւով եւ քննություն հանձնում: Այստեղ 10 բալանոց գնահատականներ են նշանակում: Եթե 3 անգամ 7 բալ ստանան, կարող են դուրս մնալ ճեմարանից:

Հոգեւոր դպրոցում բավականին խիստ կարգ ու կանոն է սահմանված, որին պետք է ենթարկվեն, ծխելն արգելվում է: Դասերից հետո 1,5 ժամ հանգստանում են, որից հետո վերակացուների հետ դասերն են պատրաստում:

Ճեմարան ընդունվում են դպրոցն ավարտելուց հետո: Այժմ այստեղ 162 ուսանողներ կան, 2-ը Դամասկոսից են: Մեր ժամանակներում սփյուռքում քիչ է հոգեւոր ոտիով գնացողների թիվը, նախընտրում են այլ բնագավառներ: Այսօրվա հոգեւորականից պահանջվում է լինել բազմակողմանի զարգացած, եւ որ նա կարողանա շփվել հասարակության տարբեր շերտերի հետ ու սիրի մարդկանց, ինչպես մեր Տերն էր քարոզում: Այսօր լրանում է ճեմարանի 130-ամյակը: Ըստ տեր Եղիշեի, շատ պարզ են նշելու այս տոնը՝ առանց թմբկահարելու: Բայց տաճարում սուրբ պատարագ են մատուցելու, այնուհետեւ նախատեսվում է հոգեհանգիստ այն կաթողիկոսների շիրիմների վրա, որոնք ջանքեր են ներդրել ճեմարանի կայացման եւ բարգավաճման գործում՝ սկսած բացման, վերաբացման տարիներից մինչեւ վերջին շրջանը (Վազգեն Ա-ի, Գարեգին Ա-ի օրոք): Այդ բոլորը Գարեգին Բ-ի գլխավորությամբ է կատարվելու, որից հետո փոքրիկ հանդիսություն է լինելու՝ զեկուցումներ, համերգ: Իսկ նոյեմբերի 6-ին, ժամը 7-ին (կարող են ցանկացողները մասնակցել), Էջմիածնի Մայր տաճարում կկազմակերպվի համերգ, առաջին մասը ճեմարանի սաների մասնակցությամբ, երկրորդ մասում ելույթ կունենան Հայաստանի սիմֆոնիկ նվագախումբը եւ մեկ այլ խումբ:

Գետոգյան ճեմարանի սաները Հայաստանի ներքին թեմերում որպես տարբեր ատիճանների սպասավորներ են աշխատում: Սփյուռքում էլ ճեմարանի շրջանավարտներից սպասավորներ ունենք, որ կաթողիկոսն է իրենց ուղարկում համապատասխան առաջնորդների համագործակցության արդյունքում՝ հաշվի առնելով նաեւ տեղի հայերի կարիքները: Կանադայի, Կալիֆոռնիայի, Ուրուգվայի առաջնորդները ճեմարանցի են: Մի երկու եպիսկոպոս Ֆրանսիայում ունենք՝ նույնպես ճեմարանի շրջանավարտներից: Սփյուռք գնալուց առաջ սովորում են այն երկրի լեզուն, որ պիտի մեկնեն:

ԱՐԴԱՆ ԱԲԵՂՅԱՆ

Գերխնդիրը որակյալ եւ մրցունակ կրթությունն է

Հարցազրույց կրթության եւ գիտության նախարար Մերգո Երիցյանի հետ

- Առաջին անգամ Բոլոնիայի գործընթացին նվիրված կոնֆերանս տեղի ունեցավ Հայաստանում, որի ժամանակ պարզ դարձավ՝ մեր երկիրը գնում է դեպի Բոլոնիայի գործընթաց:

- Կոնֆերանսին մասնակցում էին Բոլոնիայի գործընթացի քարտուղարության ղեկավար Պեռ Նիբորգը, Եվրոխորհրդի բարձրագույն կրթության կոմիտեի նախագահը: Իհարկե, մենք դեռեւս գարնանը Ստրասբուրգում հայտարարել ենք, որ գնում ենք դեպի Բոլոնիայի գործընթաց, այսինքն մեր բուհական համակարգը փորձում ենք նախեւառաջ արժեւորել երկու կարեւոր չափանիշով՝ ունենալ ազգային հենքով կրթական համակարգ եվրոպական չափանիշներին համապատասխան: Այս սկզբունքը մենք որդեգրում ենք ոչ միայն բարձրագույն, այլեւ ողջ կրթական համակարգի համար: Կարծում եմ՝ շատ ուրախալի էր, որ հենց եվրոպացի մասնագետների օգնությամբ ընկալվեցին այդ խնդիրները, այսինքն բերվեցին այն փաստարկները, թե ինչու պետք է եվրոպական կրթական տուն կառուցվի: Մասնավորապես ընդգծվեց, որ եթե մենք գնում ենք դեպի եվրոպական ընտանիք, պետք է ինտեգրվել նաեւ եվրոպական կրթական համակարգին: Այն, ինչպես գիտեք, ենթադրում է երկաստիճան կրթական համակարգ, կրեդիտային համակարգ, ուսանողների շարժունության ապահովում: Սակայն ամենահիմնականը կրթական համակարգերի համադրելիությունն է եւ որակի զուգադրելիությունը: Հայաստանը միշտ գտնվել է մեծ կրթական տարածքում: Խորհրդային տարիներին մեր կրթական տարածքը հավասար էր մի երկրի, ուր 250 մլն մարդ էր ապրում: Որպես ուսյալ, կրթյալ ժողովուրդ մենք չենք կարող բավարարվել կրթական փոքր տարածքով: Մեզ դարձյալ անհրաժեշտ է մեծ կրթական տարածք՝ այն էլ եվրոպական, միջազգային չափանիշների շրջանակներում: Ի դեպ, ընդարկումները կարեւոր են նաեւ լիսաբոնյան կոնվենցիայի սկզբունքների եւ պահանջների առումով, որոնք մեզ թույլ կտան հեռահար նպատակներ ունենալ բարձրագույն կրթական համակարգի զարգացման գործում:

- Այսօր Հայաստանը կարելի է համարել տարածաշրջանում կրթական կենտրոն: Վկայությունը հազարավոր ուսանողների առկայությունն է: Այս գործոնն ինչ դեր է խաղում կրթական բարեփոխումների առումով:

- Իսկապես, հետաքրքրությունը Հայաստանի նկատմամբ, որպես կրթական երկրի, գնալով աճում է: Իրանը, օրինակ, մեզ հետ ստորագրել է փաստաթղթերի փոխադարձ ճանաչման համաձայնագիր, որը նշանակում է, որ մեր երկրի ամեն մի կրթական փաստաթուղթ համապատասխանում է այդ երկրի կրթական փաստաթղթերին եւ հակառակը: Մենք շատ մոտ ենք նման մի փաստաթուղթ ստորագրելուն Հնդկաստանի նման հզոր երկրի հետ: Դեկտեմբերին նախատեսվում է իմ այցը Հնդկաստանի Հանրապետություն, եւ հույս ունեմ, որ մենք կստորագրենք այդ փաստաթուղթը: Մեր կրթական փոխհարաբերություններ ունենք Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրների հետ: Արաբական այնպիսի երկրներ, ինչպիսիք Քաթարն ու Քուվեյթն են, նույնպես հետաքրքրություն են ցուցաբերում մեր երկրի կրթական համակարգի նկատմամբ, եւ չի բացառվում, որ մոտ ապագայում մենք ուսանողներ կունենանք նաեւ այդ երկրներից: Եվս մեկ հանգամանք, որ կցանկանայի նշել, դա նախկին ԽՍՀՄ երկրներում ապրող հայազգի երիտասարդների հետաքրքրությունն է Հայաստանի կրթական հասարակությունների նկատմամբ, նույն միտումները կան նաեւ սփյուռքահայ ուսանողների պարագայում: Հետաքրքրություն կա նաեւ Չինաստանի կողմից, առաջին չին 15 ուսանողները շուտով կգան եւ կուսանեն Հայաստանում: Սա մեզ համար պարտավորեցնող է, մենք անընդհատ պիտի կարողանանք մեր կրթական համակարգը բարեփոխել: Եթե այսօր օտարերկրացի ուսանողները հիմնականում հետաքրքրվում են բժշկական, ճարտարապետական, ինժեներական մասնագիտություններով, ապա մենք պարտավոր ենք ընդլայնել նրանց հետաքրքրությունների շրջանակը: Այս ամենը թելադրում է կրթության որակի բարձրացում, ուսման պայմանների բարելավում: Օրինակ, այսօր ճարտարապետաշինարարական ինստիտուտը դժվարությամբ է տեղավորում բոլոր նրանց, ովքեր կուզենային ուսանել մեր երկրում: Հայաստանը պարտավոր է պատրաստվել հնարավոր ուսանողական հոսքին, քանի որ բոլոր նախադրյալները կան:

- Սա, իհարկե, բուհական կրթության մասին: Կա՞ արդյոք հետաքրքրություն միջին մասնագիտական եւ նախնական մասնագիտական կրթական համակարգի նկատմամբ:

- Իմ համոզմամբ, կրթական բարեփոխումները չի կարելի դիտարկել անջրպետված: Դրանք, իհարկե, չեն կարող նույն ընթացքով եւ մակարդակով զարգանալ: Մենք ունենք բարդ վիճակում գտնվող նախնական մասնագիտական կրթական համակարգ, որը, չգիտես ինչու, ժամանակին փորձել են մոտեցնել դպրոցին եւ միացրել են հանրակրթությանը: Տարիները ցույց տվեցին, որ դա սխալ մոտեցում էր: Վերջերս մենք կարողացանք վերականգնել 26 նախնական մասնագիտական հաստատություններ: Ցավոք, անդառնալի կորուստ են ապրել շուրջ 100 ուսումնարաններ, որոնք, իմ խորին համոզմամբ, այսօր էլ շատ անհրաժեշտ կլինեն երկրին: Մենք այդ համակարգը վերականգնում ենք եւ համարում կարեւոր ձեռքբերումներից մեկը: Կարծում եմ, որ այսօր նման վիճակում գտնվող կրթական այս հատվածը արտասահմանցի ուսանողների համար գրավիչ լինել չի կարող: Այս համակարգում մենք այսօր գերխնդիր ունենք՝ պատրաստել մասնագետների: Կյանքը ցույց է տալիս, որ մենք գործազրկության առկայության պայմաններում ունենք շինարարների, սպասարկման եւ այլ ոլորտների մասնագետների պակաս: Մենք պարտավոր ենք այդ բացը լրացնել: Այստեղ ուսումնառության միջին տեւողությունը 1-2 տարի է, եւ արդյունքն ավելի արագ կարող է երեւալ: Երկիրն անվերջ չի կարող ունենալ բարձրագույն կրթություն ունեցող բանվորներ, դա մեծ շռայլություն է: Այս ամենով հանդերձ, մենք ձեռնարկել ենք աշխատաշուկայի ուսումնասիրություն: Այստեղ մեզ օգնության է հասել ՄԱԿ-ը, որի օգնությամբ առաջիկայում կկատարենք մեծ ուսումնասիրություն, թե ինչ մասնագիտությունների գծով երկիրը մասնագետներ պատրաստելու անհրաժեշտություն ունի, այդ թվում՝ նաեւ բանվորական կադրերի:

- Բարձրագույն կրթությունն ունի վճարովի եւ անվճար համակարգեր: Իսկ ինչպիսի՞ն պետք է լինի միջին եւ կրտսեր մասնագետների պատրաստման գործում պետության քաղաքականությունը:

- Աշխարհի շատ երկրներում, եվրոպայում նախնական մասնագիտական կրթական համակարգը ֆինանսավորում է պետությունը: Իր երկրի բանվորին պատրաստում է պետությունը անկախ նրանից՝ նա մասնավոր ձեռնարկություններո՞ւմ է աշխատելու, թե՞ պետական: Մեր երկրի բանվորին եւս պետք է պատրաստի պետությունը՝ խրախուսելով նաեւ այն պատանուն, որ գալու է այստեղ սովորելու: Կարծում եմ՝ այն ռազմավարությունը, որ ընդունել է կառավարությունը, ստեղծում է բոլոր նախադրյալները պետությանը կոնկրետ քայլերի մղելու համար՝ ավելացնելու այս բնագավառին տրամադրվող ֆինանսական միջոցները: Արդեն այսօր անհրաժեշտ է պետության կարիքները հաշվառել, կոնկրետացնել եւ վերականգնված ուսումնական հաստատություններում սկսել աշխատաշուկային անհրաժեշտ մասնագետների պատրաստումը:

- Մենք խոսեցինք բարձրագույն, միջին եւ նախնական մասնագիտական կրթական բարեփոխումների մասին, իսկ ինչպե՞ս եք պատկերացնում կրթական բարեփոխումների շրջանի մեջ հանրակրթության բնագավառը:

- Հանրակրթությունը, բնական է, ամփոփումն է 10-ամյա կամ 12-ամյա ուսումնառության: Այստեղ շատ կարեւոր է նկատել, որ հանրակրթական դպրոցում որակյալ կրթությունը դառնալու է հիմնականը կրթությունը շարունակելու համար: Հանրակրթական դպրոցը պետք է պատասխան տա՝ կարողանո՞ւմ է արդյոք շրջանավարտը հաջող քննություն բռնել, թե՞ ոչ՝ իր կրթությունը շարունակելու համար: Հանրակրթության կայացման համար անհրաժեշտ են բազմաթիվ գործոններ եւ նախապայմաններ: Օրինակ, անհրաժեշտ են մեկնարկային հավասար պայմաններ յուրաքանչյուր երեխայի համար: Կամ՝ անկախ նրանից, թե որտեղ է դպրոցը՝ հեռավոր Մեղրիո՞ւմ, թե՞ Երեւանում, պետք է տա որակյալ ուսուցում, հաստատուն եւ մրցունակ գիտելիք: Այս նպատակին են ծառայելու ուսուցիչների վերապատրաստման դասընթացները, նոր ծրագրերը եւ դասագրքերը, ատեստավորման նոր համակարգը, նյութատեխնիկական պայմանների բարելավումը: Այս առումով շատ կարեւոր է կրթության տեսչության ստեղծումը, որի նախագիծն արդեն կա եւ 2005-ին կյանքի ուղեգիր կստանա: Դպրոցի դերը բարձրացնելու համար անհրաժեշտ է նաեւ կրթական հաստատություններում հիմնական գործող անձանց՝ ուսուցչի, աշակերտի, ծնողի միասնականության ապահովումը: Աշխարհում եւս ընդունված է, որ դպրոցներին ծնողները օգնեն, բայց դա արվում է կամավորության սկզբունքով: Շատ կարեւոր է, որ դա չարվի պարտադրաբար եւ աջակցությունը լինի արժանապատիվ: Դպրոցները պետք է հեռու պահել հարկահավաքությունից: Ընդհանրապես շատ եմ կարեւորում դպրոցի բարոյահոգեբանական առողջացումը, որը թույլ կտա խուսափել անցանկալի երեւույթներից՝ դարձյալ հանուն դպրոցի:

- Ձեր պատասխաններից հասկացանք, որ կրթական համակարգը պետք է դիտարկել համալիր, փոխկապակցված զարգացման շրջանակներում:

- Իսկապես, պետք է համակարգը համալիր զարգանա: Բացի այդ, երկրի կրթական համակարգի յուրաքանչյուր զարգացում պետք է դիտարկել երկրի տնտեսության, մշակույթի, սոցիալական ոլորտի խնդիրների լուծմանն աջակցելու համատեքստում՝ պատրաստելով անհրաժեշտ մասնագետների: Այս առումով մեր կրթական համակարգը պետք է անընդհատ առաջ նայի: Այսօր ես մեր համակարգի գերխնդիրը համարում եմ հաստատուն գիտելիքի ապահովման անհրաժեշտությունը, մրցունակության ապահովումը: Մեր գործելակերպը պետք է լինի հանուն որակի, այդ դեպքում միայն կունենանք այն կրթական համակարգը, որին ձգտում ենք: Ես վստահ եմ, որ ունենալու ենք նման համակարգ, քանզի կա համընդհանուր ուշադրություն եւ նպատակամետություն: Կարծում եմ, ընդդատություններն էլ լավը տեսնելու բուռն ցանկությամբ են պայմանավորված:

Ս. Հ.

Գիտությունը պահպանել չի կարելի, պետք է զարգացնել

Հայաստանում գիտությունը ծերանում է: Եթե 1970-ականներին գիտության թեկնածուների միջին տարիքը 30 տարեկանն էր, դոկտորներինը՝ 40 տարեկանից ցածր, ապա այսօր թեկնածուների, դոցենտների միջին տարիքն անցնում է 50-ից, գիտության դոկտորինը՝ 60 տարեկանից: Երեւանի պետական համալսարանի (ԵՊՀ) բնագիտական ֆակուլտետների ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, ակադեմիկոս Էդուարդ Չուբարյանը մտավախություն ունի, որ եթե ամեն ինչ այսպես շարունակվի, տասը-տասնհինգ տարի հետո պետհամալսարանում դասախոսներ գրեթե չեն մնա: «Տարեց դասախոսից ժամանակակից մակարդակ պահանջելը դժվար է, ասաց պրոռեկտորը: Կյանքն առաջ է գնում, այսօր բուհ ընդունվողներն իրենց մակարդակով էապես բարձր են նախորդ սերունդներից, պահանջներն էլ ավելի բարձր են: Մենք, ի տարբերություն խորհրդային ժամանակների, այսօր չենք տանում աշխարհի լավագույն ատենագրերը, քանի որ չենք կարող վճարել»:

Պրն Չուբարյանը համոզված է, որ գիտությունը նույն մակարդակի վրա թողնելը նշանակում է հետ պահել համաշխարհային զարգացումներից: Ճիշտ է, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը բարձր մակարդակի վրա է, սակայն այդ մեկ ճյուղը ողջ գիտությունն առաջ տանել չի կարող:

Բնականաբար, երիտասարդ մասնագետն ավելի աշխատունակ է: «Գիտությունը չի երիտասարդանում նաեւ ատոմիրանական տեղերի սահմանափակ քանակի պատճառով, ասաց պրոռեկտորը: Ունենք 100 ատոմիրան, մոտ 300 պրոֆեսոր, բայց 50 ատոմիրանս: Ատոմիրանների թիվը պետք է գոնե կրկնապատկվի»:

Երկրորդ թերությունը միջազգային կոնֆերանսներին մասնակցելու հնարավորությունների պակասն է: Ճիշտ է, 1990-ականների համեմատ մթնոլորտն աշխուժացել է, սակայն բավարար չէ: ԱՊՀ երկրների բուհերի հետ համագործակցությունն ավելի թույլ է, քան եվրոպական կամ ամերիկյան բուհերի, քանի որ վերջիններս որոշ դեպքերում հոգում են հրավիրվող երկրի ծախսերը: «Լինում են դեպքեր, երբ երիտասարդները միջազգային կոնֆերանսների թեզիսներ են ուղարկում, թույլտվություն ստանում այնտեղ հանդես գալու, սակայն ֆինանսների բացակայության պատճառով չեն գնում, ասաց պրոռեկտորը: Մարդիկ ընդունվում են ատոմիրանոցա, ավարտում, պաշտպանելուց անմիջապես հետո գնում, քանի որ զարգացման ապագա չեն տեսնում»:

Քանի որ բնագիտական գիտություններն ազգային բնույթ չեն կրում, միջազգային դրամաշնորհները նպաստում են այս ոլորտի զարգացմանը, ինչը չի կարելի ասել հումանիտար ֆակուլտետների մասին: Պրոռեկտորի կարծիքով սա օբյեկտիվ պատճառներ ունի: «Դեռեւս նախորդ հասարակարգից մարդու հոգեբանությունը ոչ մեկին չէր հետաքրքրում, չկար սոցիոլոգիան որպես գիտություն, ասաց նա: Այսօր իրավիճակն այլ է: Այս տարի, օրինակ, հոգեբանության ֆակուլտետի 8 անվճար տեղի համար կար 144 դիմում»: Նորությունները ընկալելու համար հարկավոր է օտար լեզվի բացարձակ իմացություն: Պրն Չուբարյանը գտնում է, որ նոր զարգացող ուղղություններում հարկավոր է օտար լեզվի հիմքը լավ դնել: Այս դեպքում ժամանակի ընթացքում հումանիտար ոլորտը եւս դրամաշնորհներ կստանա: Լեզուների բնագավառում դրամաշնորհ ստանալը գրեթե անհավանական է, հայոց լեզվի հետազոտությունները էջերին են հետաքրքրում, օտար լեզուների համար դրամաշնորհ կստանան օտարազգիները:

Պետհամալսարանում ամենամեծ թվով գրանտներն ունի ֆիզիկայի ֆակուլտետը: «Այստեղ այսօր գործում է մոտ 25 գրանտ, որոնք մոտ 1 մլն դոլար գումար են բերում, ասաց պրն Չուբարյանը: Գումարի մի մասը նախատեսված է փորձարարական աշխատանքների եզակի գործիքների ձեռքբերման, հետազոտությունների նպատակով արտասահման մեկնելու ծախսերի համար: Այսօր, երբ գիտաշխատողի միջին աշխատավարձը 16.000 դրամ է, այս դրամաշնորհները կարեւոր օժանդակություն են»:

Վերջերս Եվրոխորհուրդը 17 մլդ եվրոյի դրամաշնորհ է հատկացրել գիտական աշխատանքների համար: Այս գումարի 315 մլն եվրոն նախատեսված է ԱՊՀ երկրների համար: Հաղթած յուրաքանչյուր նախագիծ պետք է ամենաքիչը 1 մլն եվրո արժենա: Հայաստանից ներկայացված ութսուն նախագծերից տասնութի հերթնակը պետհամալսարանն է: Համալսարանում տարեկան գրեթե 100 թեմա է կատարվում, որոնց համար ընդամենը 104 մլն դրամ է տրամադրվում (այսինքն՝ յուրաքանչյուր աշխատանքի համար մոտ 1600-1700 եվրո): Պրն Չուբարյանի գնահատմամբ՝ եթե բուհը կարողանա 2-3 դրամաշնորհ հաղթել, մեծ հաջողություն կլինի:

«Ազգի» այն հարցին, թե քանի անգամ է անհրաժեշտ ավելացնել գիտությանն ուղղվող գումարները ցանկալի արդյունքի հասնելու համար, Էդուարդ Չուբարյանը պատասխանեց. «Եթե տասն անգամ ավելացնեն, դա քիվ չէ, հարյուր անգամ՝ ռեալ չէ»:

ԹԱՄԱՐ ՄԵԼԱՔՅԱՆ

Արաֆաթի առողջությո՞ւնն է վատացել, թե՞ նրան թունավորել են

Ինչո՞վ են պայմանավորված Պաղեստինի առաջնորդի հնարավոր մահվան Իսրայելի հաշվարկները

Վերջին տարիներին Իսրայելն առաջնորդվում էր Պաղեստինի ինքնավարության առաջնորդ Յասեր Արաֆաթի չեզոքացման պետական առաջադրանքով: Դրա կատարումը պայմանավորվում էր Արաֆաթի հրաժարականով, աքսորով կամ սպանությամբ: Հրաժարականի հարցում պաղեստինցիների առաջնորդն անդրվելի մնաց, հայտարարելով, որ նախ հարկավոր է կազմավորել պաղեստինյան պետություն, իսկ նրան աքսորելու իսրայելական առաջադրանքը բախվեց պաղեստինցի ժողովրդի բուռն հակազդեցությանը, ինչի հետեւանքով չարժանացավ մեծ տերությունների հավանությանը:

Այլ կերպ, Պաղեստինից Արաֆաթին բռնի աքսորելու դեպքում չէր բացառվում նաեւ միջազգային հանրության հակազդեցությունը: Դրա համադրումը պաղեստինցիների հակազդեցությամբ անկանխատեսելի հետեւանքներ էր ունենալու Իսրայելի համար: Մանավանդ որ Արաֆաթը, թեկուզ աքսորավայրում, ազատ գործունեության հնարավորություն էր ստանալու, եւ նրա համար առանձնակի դժվարություն չէր ներկայացնելու իրեն փոխարինողին այնտեղից ղեկավարելը:

Ահա թե ինչու Արաֆաթին աքսորելու Իսրայելի ղեկավարության սպառնալիքներին միջամտում էր վարչապետ Արիել Շարոնը եւ «նոր բնույթ հաղորդում» դրանց: Դեռեւս սեպտեմբերի կեսերին «Եդիոթ ահրոնոթ» թերթին տված հարցազրույցում Շարոնը հիշեցրել էր «Համասի» հոգեւոր առաջնորդ շեյխ Յասինի, ապա եւ Ռամֆիսիի սպանության մասին, մասնաբերելով. «Ինչ վերաբերում է Արաֆաթին աքսորելու հարցին, մենք նրա հետ բոլորովին այլ կերպ կվարվենք, սպասում ենք հարմար պահի: Արաֆաթը պետք է արժանանա վերոհիշյալ մարդասպանների ճակատագրին, որովհետեւ նրանց գործն է կատարում»:

Շարոնի այդ խոսքերը ոչ միայն հասատեցին Արաֆաթին սպանելու Իսրայելի պետական առաջադրանքը, այլեւ սպանությունը դարձրին Թել Ավիվի օրակարգի խնդիր: Սպանությունը որեւէ գործչի չեզոքացնելու միջոց է, թունավորումն էլ համապատասխանաբար՝ սպանության: Ակամա հարց է ծագում. դա ինչ առնչություն ունի Յասեր Արաֆաթի հետ: Թերեւս այդ հարցին հոկտեմբերի 1-ին պատասխանել է BBC-ի թուրքական ծառայությունը՝ հիմք ընդունելով «Ինդիփենդենթ» թերթի հոդվածը, որտեղ փորձ է արվում պարզաբանելու պաղեստինցի առաջնորդի առողջական վիճակի վատթարացման պատճառները:

Ինչպես հայտնի է, հոկտեմբերի 28-ին կտրուկ վատացել էր Արաֆաթի առողջությունը: Այս պայմաններում 2001 թ. դեկտեմբերից նրան Ռամալլայի կենտրոնակայանում շրջափակող Իսրայելը հանկարծ թույլատրեց, որ նա օտարերկրյա բուժօգնություն ստանա: Պաղեստինցի, հորդանանցի, եգիպտացի եւ թունիսցի բժիշկները դժվարացան միաժամանակ ախտորոշել հիվանդությունը: Արաֆաթը Ռամալլայից տեղափոխվեց Հորդանանի մայրաքաղաք Ամման, որտեղից էլ Ֆրանսիայի նախագահ Շիրակի ուղարկած ինքնաթիռով՝ Փարիզ:

Մինչ ֆրանսիացի բժիշկները բուժզննման էին ենթարկում Պաղեստինի 75-ամյա ղեկավարին, հանկարծ շրջանառության մեջ դրվեց նրա սակավարյունությամբ տառապելու վարկածը, ենթադրելով, որ պատճառը կարող է լինել վիրուսային վարակը, արյան վարակումը կամ չարորակ նորագոյացությունը: Ըստ երեւույթին սակավարյունության վարկածը շրջանառության մեջ է դրվել Իսրայելի հետախուզության միջամտությամբ, որ Յասեր Արաֆաթին բուժող ֆրանսիացի բժիշկները չարորակ նորագոյացության հետ բացառում են նաեւ սակավարյունությունը, իսկ իսրայելական զինվորական աղբյուրները համառորեն շարունակում են պնդել սակավարյունության վարկածը:

Ինչ հիմք ունեն այս պնդումները, երբ Արաֆաթը բուժվում է ոչ թե իսրայելական հոսպիտալում, այլ ֆրանսիական հիվանդանոցում, ընդ որում նրան բուժող բժիշկները դեռեւս չեն կարողանում ախտորոշել հիվանդությունը: Իսրայելական վերոհիշյալ աղբյուրները անդրադարձան են թողնում հարցը: Իսկ դա ենթադրում է Արաֆաթի սակավարյունության ցանկացած դեպքում՝ պայմանավորված բուն հիվանդությունը հոդարկելու նկրտումներով:

Մի դեպքում են հոդարկում: Այն դեպքում, եթե Արաֆաթի առողջական վիճակի կտրուկ վատացման հիմքում ընկնում է իսրայելական գաղտնի ծառայությունների ուղղակի կամ միջնորդավորված միջամտությունը: Թերեւս այդ առումով պատահական չէր BBC-ի թուրքական ծառայության անդրադարձն «Ինդիփենդենթին», որը նշում է Ռամալլայում Արաֆաթի կենտրոնակայանի անձնակազմի անդամների հարցաքննումը, պարզելու համար, թե պաղեստինցի առաջնորդին չի՞ թունավորել անձնակազմից Իսրայելի հետ համագործակցող մեկը:

Համագործակցության պարագան ենթադրելի է, իսկ դա չի բացառում թունավորումը: Այն առումով, որ իսրայելական բանակն ունի քիմիական կամ կենսաբանական զենքի հարուստ պաշարներ, իսկ Իսրայելի լաբորատորիաները՝ տարբեր վարակների հարուստ տեսականի: Համենայն դեպս, Պաղեստինի առաջնորդ Արաֆաթի տեղափոխումը Փարիզ Իսրայելին ձերբազատում է նրան սպանելու պետական առաջադրանքից բխող պարտավորությունից: Քանի որ դրանով Իսրայելը ձերբազատվում է նաեւ սպանության պատասխանատվությունն ստանձնելու պարտականությունից, ուստի Արաֆաթի հեռացումը Ռամալլայից, որտեղ էլ դա բուժման նպատակով լինի, միանգամայն ձեռնտու է նրան:

Ինչ վերաբերում է առաջնորդի առողջական վիճակի վատացմանը, երբ չի ախտորոշվում հիվանդությունը, ավելի հաճախ ձեռնտու պետք է համարել, որովհետեւ առանց ախտորոշման Արաֆաթի բուժումը կձգձգվի, որտեղ էլ նա պահպանի Պաղեստինի ինքնավարության ղեկավարի պաշտոնը, վատառողջությունը նրան թույլ չի տա լիարժեք կատարել պաշտոնից բխող պարտավորությունները: Ահա թե ինչու ստեղծված իրավիճակում պաղեստինցիները դժվարանում են կողմնորոշվել, իսկ Իսրայելի կառավարությունն առողջության վերականգնման դեպքում Արաֆաթի վերադարձը Ռամալլա բացառելու առաջադրանքով Պաղեստինի առաջնորդի հնարավոր մահվան հաշվարկներ է անում: Այդ ընթացքում վարչապետ Արիել Շարոնը լկտիաբար հայտարարում է. «Թույլ չեմ տա, որ Արաֆաթին թաղեն Երուսաղեմում»:

ՀԱՐՈՒԹ ՅԱԼԱՖՅԱՆ

«Արաֆաթը եթե վերադառնա էլ, առաջվանը չի լինի»

Պնդում է նրա օգնականը

Ներկայումս Ֆրանսիայում բուժվող պաղեստինցի առաջնորդ Յասեր Արաֆաթի օգնական Իմադ Շաֆուրը հայտարարել է, որ հիվանդությունն արդեն ազդել է Պաղեստինյան ինքնավարության ղեկավարությունում Արաֆաթի դիրքերի վրա: «Նույնիսկ եթե նա վերադառնա (իսկ ես հուսով եմ, որ այդպես կլինի), այլեւս նախկին Արաֆաթը չի լինի ոչ մեզ համար, ոչ Իսրայելի, ոչ էլ իր համար: Նա ծեր, հիվանդ մարդ է եւ ունի ուրիշ պահանջմունքներ», ասել է Շաֆուրն իսրայելական «Հաարեց» թերթի թղթակցին:

Նրա խոսքերով, Արաֆաթի առողջական վիճակը երկուշաբթի օրը փոքր-ինչ բարելավվել է, սակայն լուրջ երկյուղները պահպանվում են:

Արաֆաթի մեկ ուրիշ օգնական՝ Մոհամմեդ Ռաշիդը պնդում է, թե բժիշկները բացառել են սրտիսակարյունությունը նրա հավանական հիվանդությունների թվից: Սակայն Շաֆուրը հերքում է Ռաշիդի պնդումը, նշելով, որ բուժզննությունը շարունակվում է:

Ռաշիդը եւ Արաֆաթի նախկին խորհրդական Սամեդ Թիբին Ասոշիեյթեդ պրեսի թղթակցին հայտնել են, որ ֆրանսիացի բժիշկները վերջնական ախտորոշում կատարելու են չորեքշաբթի օրը:

Ֆրանսիական հիվանդանոց տեղափոխվելուց հետո առաջին անգամ Արաֆաթը կիրակի օրը հանդիպում է ունեցել իր խորհրդականներում է ունեցել իր հետ: Մինչ այդ նրան այցելել էին միայն կինը, դիվանատան պետ Ռամզի Խուրին եւ ՄԱԿ-ում Պաղեստինի ազատագրման կազմակերպության ներկայացուցիչ Նասեր ալ Քիդվան, որն Արաֆաթի ազգականն է:

«Կուրսոր» գործակալությունը հաղորդում է, որ Արաֆաթը նոյեմբերի 2-ին դատապարտել է նախորդ օրը Թել Ավիվի «Կարմել» շուկայում տեղի ունեցած ահաբեկչությունը: Այն դատապարտել են նաեւ Պաղեստինյան ինքնավարության վարչապետ Աբու Ալլան եւ ՊԱԿ գործկոմի գլխավոր քարտուղար Աբու Մազենը:

Պաղեստինյան գաղթականներից մեկի 16-ամյա բնակիչ Ամար ալ Ֆարը Թել Ավիվի շուկայում իրեն պայթեցնելով՝ 3 իսրայելցիների (2 կին եւ 1 տղամարդ) մահվան պատճառ էր դարձել: Երեք տասնյակ խաղաղ հրեաներ վիրավորվել էին:

Ահաբեկչության պատասխանատվությունն ստանձնել է «Աբու Ալի Մուսաֆա» զինյալ խմբավորումը, որը գործում է «Պաղեստինի ազատագրման ժողովրդական ճակատ» ահաբեկչական կազմակերպության շրջանակներում:

Իսրայելցի զինվորականներն ավերել են պաղեստինցի մահապարտ ահաբեկչի տունը: Հաղորդվում է, որ պատանու մայրը՝ Սամիր Աբդալլան դատապարտել է ահաբեկչության կազմակերպիչներին, նրանց անվանելով «դեռահասի միամտությունից օգտված բարոյազուրկ մարդիկ»:

ԲԱՂԴԱԴ

Իրաքում 6,5 հազար ամերիկացիների զինծառայությունը երկարաձգվում է

Հուժկու պայթյուն Բաղդադում

ԱՄՆ պաշտպանության նախարարությունը հաստատել է, որ Իրաքում ամերիկացի հազարավոր զինծառայողներ նախատեսված ժամկետից երկար են մնալու: Նախագահական ընտրությունների նախօրեին ձեռնարկված այս քայլի նպատակն է ավելի շատ զինվորներ ունենալ Իրաքում:

BBC-ի տվյալներով, Իրաքում հունվարին նախատեսված ընտրություններից առաջ ամերիկացի 6,5 հազար զինծառայողներ պետք է տուն վերադառնային: Պենտագոնի նոր որոշման պատճառով նրանց ծառայությունը կերկարաձգվի 1-2 ամսով:

Բնականաբար զինվորներին դա դուր չի գալիս: Պենտագոնում ասում են, որ Իրաքում պահվում են այնտեղ 10 ամիս ծառայած ստորաբաժանումները, որոնց եւ 2 ամիս է հարկավոր մեկամյա ծառայության ժամկետը լրացնելու համար:

Մինչդեռ Պենտագոնի նոր որոշման ընդունման իրական պատճառն այն է, որ Իրաքում ընտրությունների անցկացման պահին ներկա լինեն առավել փորձված ամերիկյան զորամասերը: Ըստ պաշտոնական վերջին տվյալների, Իրաքում տեղաբաշխված են 134 հազար ամերիկացի զինծառայողներ, ինչպես նաեւ կոալիցիոն ուժերի 25 հազար զինվորներ ու սպաներ: Հունվարին ամերիկյան զորաբաժնի թվակազմը կարող է հասնել 142 հազարի:

Բաղդադում իրավիճակը մնում է լարված: «Ալ Արաբիա» արբանյակային հեռուստաընկերությունը հաղորդում է, որ երեկ առավոտյան այնտեղ հուժկու պայթյունից զոհվել է 5 մարդ, 4 ուրիշներ վիրավորվել են: Ոմանք գործակալությունը նշում է, որ պայթյունը տեղի է ունեցել կրթության նախարարության շենքի մոտ: Շենքը վնասված է: Ականված ավտոմեքենայի պայթյունից տուժել են նաեւ մոտերում կանգնեցված ուրիշ ավտոմեքենաներ: Բռնկել է հրդեհ: Պայթյունից հետո հայֆա փողոցի շրջանում կատաղի փոխհրաձգություն է ծավալվել իրաքցի ապստամբների եւ ամերիկացի զինվորների միջեւ:

Պեկինը խարազանում է «Բուշի դոկտրինան»

Չինաստանի նախկին արտգործնախարար Տյան Տիչենը, որն այժմ էլ ՉԺՀ արտաքին քաղաքականության «ծարտարապետներից» է, անգլերեն լույս տեսնող «Չայնա դեյլի» չինական պաշտոնաթերթում ԱՄՆ-ին խստիվ դատապարտել է Իրաքի պատերազմի առնչությամբ:

Չին դիվանագետի խոսքերով, այդ պատերազմը հանգեցրել է աշխարհում ահաբեկիչների աճուրդացմանը եւ ընդլայնել է ԱՄՆ-ն ու Եվրոպան բաժանող անդունդը: Տյան Տիչենի խոսքերով, ներկայումս ԱՄՆ-ի ժողովրդականությունն այնքան է ընկել, որ վիճակը Վիետնամի պատերազմի ժամանակաշրջանից էլ վատ է: Իրաքում նախագահ Ջորջ Բուշի գործողություններն «անհիմն ինքնավստահության» արտահայտություն են:

«Կանխիկ հարվածներ» հասցնելու Բուշի քաղաքականությունը եւ Իրաքի պատերազմը, ըստ Տյան Տիչենի, քայքայեցին 2001 թ. սեպտեմբերի 11-ից հետո աշխարհում ստեղծված հակաահաբեկչական կոալիցիան: «Ամերիկացիները սխալվում են, կարծելով, թե 21-րդ դարն «ամերիկյան» դար է», ընդգծել է չին դիվանագետը:

Ոմանք գործակալությունը նշում է, որ չնայած Ջորջ Բուշին հասցեագրված խիստ քննադատությանը, Տյան Տիչենն իր հարցազրույցում բնավ չի հիշատակել ԱՄՆ նախագահության դեմոկրատ թեկնածու Ջոն Քերիի անունը:

Նոբելյան մրցանակի դափնեկիրը դատի է տվել ԱՄՆ կառավարությանը

Խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիր, իրանցի կին գող Շիրին էբադին դատի է տվել ԱՄՆ կառավարությանը, պահանջելով վերացնել այդ երկրում իր գրի հրատարակման վրա հաստատված արգելքը:

Ասոշիեյթեդ պրեսի գործակալության տվյալներով, անցյալ շաբաթ Նյու Յորքի դաշնային դատարան ներկայացված հայցը երկուշաբթի օրն ընդունվել է դատաքննության:

Իրանցի իրավապաշտպանը պահանջում է չեղյալ հայտարարել ԱՄՆ ֆինանսների նախարարության սահմանած այն կանոնը, որն ամերիկյան հրատարակչություններին արգելում է լույս ընծայել Վաշինգտոնի պատժամիջոցներին ենթակա երկրների հեղինակների գրքերը: Իրանը, Կուբան եւ Սուդանը «պատժված» երկրների այդ ցանկում են:

Էբադիի դատական հայցում նշվում է, որ տվյալ կանոնը հակասում է ԱՄՆ սահմանադրության մեջ խոսքի ազատություն երաշխավորող առաջին ուղղմանը, ինչպես նաեւ Կոնգրեսի այն հայտարարություններին, թե օտար երկրների դեմ ուղղված տնտեսական արգելքները չպետք է խոչընդոտեն տեղեկատվության եւ գաղափարների ազատ տարածմանը:

57-ամյա Շիրին էբադին առաջին կին մահմեդականն է, որը 2003 թ. խաղաղության Նոբելյան մրցանակի արժանացավ Իրանում մարդու իրավունքների պաշտպանության համար:

Մոսկվան ազատվում է Լենինի թանգարանից

Մոսկվայի իշխանությունները որոշել են դաշնային սեփականություն դարձնել Հեղափոխության հրապարակում գտնվող նախկին Լենինի թանգարանի շենքը: Այդ մասին Ինտերֆաքս գործակալության թղթակցին հայտնել է քաղաքի վարչակազմի աղբյուրներից մեկը:

Նշվում է, որ Մոսկվայի փոխքաղաքապետ Վալերի Շանցեւն արդեն ստորագրել է համապատասխան կարգադրություն: Քաղաքապետարանի ներկայացուցիչը մանրամասնել է, որ հիշյալ շենքը դուրս կգրվի քաղաքի սեփականությունից: Միաժամանակ ՌԴ մշակույթի նախարարության եւ դաշնային ունեցվածքի կառավարման վարչության հետ համաձայնագիր կկնքվի նախկին թանգարանի առանձին հարկաբաժիններ Մոսկվայի կառավարության եւ քաղդումայի միջոցառումների անցկացման ժամանակ օգտագործելու հնարավորության վերաբերյալ:

Հունվարի վերջերին ՌԴ մշակույթի նախարար Միխայիլ Շվիդկոյը հայտարարել էր, որ դաշնային կենտրոնը Լենինի թանգարանը կստանա «Տարիցինո» թանգարան-կալվածքը Մոսկվայի իշխանություններին հանձնելու դիմաց:

Մշակույթ

Ածելու սայրի վրայով

Հրանտ Թոխատյանը թեեւ վշտացած է, բայց հավատով է նայում վաղվա օրվան

Հրանտ Թոխատյանի հետ ամեն մի հանդիպում հետաքրքրական խոսքուգրույց է դառնում, մտորելու առիթ տալիս: Տխուր-տխուր աչքերով այս արտիստը, ով ավելի հաճախ կատակերգական վիճակներում հայտնված մարդու կերպար է անձնավորում, ամենայն պատասխանատվությամբ ու պրոֆեսիոնալ բարձր մակարդակով ստեղծում է նաեւ տրագիկոմիկական կերպարներ: Եվ դժվար է ճգրիտ որոշել Հրանտ Թոխատյանի կատարողական ոճը: Մեր ժամանակի, մեր տարածության մեջ նա ստեղծել է Հրանտի տեսակը, որին ոչ մեկի, ոչ մի որակի հետ չես համեմատի: Ու ինձ միշտ թվացել է, նա հիանալի կկերպավորեր չեխովյան կամ սարոյանական կերպարներ՝ հոգեկան հզոր ուժի տեր եւ իր շրջապատում հազիվհազ հարմարվող տխուր մարդու տեսակը:

- Չէ,- ասաց Հրանտ Թոխատյանը մեր վերջին հանդիպման ժամանակ,- ես համաձայն չեմ Ձեզ հետ: Իմն իմ տեսակի՝ Հրանտի տեսակի կերպարն է: Այն էլ ադեն ստեղծել եմ: Դա են վկայում Երեւանի կամերային թատրոնում, ինչպես նաեւ հեռուստաբեմադրություններում եղածները. թեեւ, ճիշտն ասած, դժվար է, օրինակ, «Մեր բակը», «Խաթաբալադան» կամ, ասենք, «Mea culpa»-ն հեռուստատեսային բեմադրություններ, ֆիլմեր կամ որեւէ ուրիշ կերպ անվանել:

Սա իր կարծիքն է իր մասին, եւ ես բնավ չեմ ուզում իմ ցանկությունը պարտադրել նրան: Հրանտ Թոխատյանը ստեղծագործական այնպիսի ճանապարհ է անցել, որ ինքն ավելի լավ կարող է բնորոշել իրեն եւ իր արվեստը: Նրբաճաշակ ու կիրթ մարդ լինելով, նա կարողանում է անչափ խիստ դատողություններ անել իր աշխատանքի մասին, սակայն անչափ զգույշ լինել իր արվեստակից բարեկամներին ճնշադատելուց: Անգամ չհաջողված, տաղալված բեմադրությունները չի ճնշադատում (իհարկե, նաեւ՝ ճոռոմ ու շողոմ բառերով չի գովաբանում), որովհետեւ լավ գիտե, որ այսօր մեզ մոտ արվեստի մարդը քայլում է ածելու սայրի վրայով: Դժվար, դաժան, հաճախ ինքնալլկող քայլ է սա, երբ ստեղծագործական աշխատանքդ գալիս, բախվում է ժամանակակից ամենակալ բազարին, ուր ծախվում է ամեն ինչ, այդ թվում նաեւ՝ հոգեւոր, ստեղծագործական արժեքներ: Ոչ միայն ծախվում է, այլեւ գողություն է կատարվում: Այսպես է եղել Արմեն Համբարձումյանի եւ Հրանտ Թոխատյանի համատեղ ծրագրով ստեղծված «Մեր այբբենարանը» տեսաֆիլմի հետ:

Այս տեսաֆիլմի մասին բազմաթիվ խոսակցություններ են եղել: Ոմանց գոհացրել է այս աշխատանքը, մյուսները դիտողություններ ունեն: Ճաշակի հարց է: Բայց որ այս ծրագիրը կարեւոր ու անհրաժեշտ էր, ոչ ոք չի կարող ժխտել:

- Ես չեմ ուզում ասել, թե մեր աշխատանքը հոյակապ է, անգերազանցելի, թերություններ չկան,- ասաց Հրանտ Թոխատյանը:- Բայց այս ժամանակի մեջ, մեր սուղ պայմաններում մենք փորձեցինք ստեղծել ոչ միայն հայոց գրերի, այլեւ հայոց պատմությունը երեխաների համար: Իհարկե, լավ կլիներ, որ այսպիսի ծրագիրն իրականացվեր պետության միջոցներով, պետական հովանավորությամբ: Բայց, դե, գիտենք, թե վիճակն ինչպիսին է...

...Գիտենք, գիտենք, որ մշակույթի ոլորտում կատարվող ծախսերն այսօր կազմում են երկրի տարեկան բյուջեի 1 տոկոսից էլ պակաս չափը: Ծիծաղելի կլիներ մտածել, որ այս 1 տոկոսի մեջ ամենատարբեր ասպիրանտների եւ նրանց զարմիկ-զարմուհիների «համաշխարհային մակարդակի» ստեղծագործություններից բացի պետք է նաեւ տեղավորվեին այլ ծրագրեր: Ճիշտ է, Արմեն Համբարձումյանի եւ Հրանտ Թոխատյանի «Մեր այբբենարանն» էլ անչափ բարձր պահանջներ գուցե եւ չկարողանա բավարարել, բայց որ անհրաժեշտ է՝ դրանում կասկած լինել չի կարող:

Ամեն դեպքում գործն արվում է եւ մոտ ժամանակներս կմոտենա ավարտին: Սակայն ադրանքը (որքան էլ նուրբ գտնվենք, պիտի փաստենք, որ այս տեսաերիզն էլ ադրանք է շուկայում) շուկա հանվելուց հետո կատարվում է պարզապես անհավատալի չափերի հասած ավազակություն: Տեսաժապավենները կրկնօրինակվում են եւ սկսում վաճառվել ավելի էժան գնով:

Հրանտ Թոխատյանն ասաց, որ

այս վտանգի դեմն առնելու համար իրենք փորձեցին անել ամեն հնարավորը՝ ազնիվ միամտությունից (այսինքն՝ օրենքի, իրավապահների ուժերից) սկսած մինչեւ ամենատարբեր կետերից այդ կեղծ տեսահոլովակները գնելը: Ոչ մի արժեք չունեցավ այս պայքարը, որովհետեւ հնարավոր չէ պարզել, թե ովքեր են վերաձայնագրություններ անում, որտեղ, ինչ քանակով: Դա ոչ մի կերպ հնարավոր չէ վերահսկել:

- Դրությունը բարդանում է նրանով, որ տեսահոլովակների սպերային շուկան միայն Հայաստանով չի սահմանափակվում,- ասում է Հրանտ Թոխատյանը:- Ռուսաստանում եւ հատկապես Մ. Նահանգներում այսօր մենք, դժբախտաբար, հայկական բազմաքանակ գաղութներ ունենք, որոնք կազմվել են վերջին տարիներին Հայաստանից արտագաղթած մարդկանց հաշվին: Եվ Մոսկվայում, Կրասնոդարում, Լոս Անջելեսում կամ Նյու Յորքում բազմահազար հայեր են ապրում, որոնք երեկ Երեւանի, Գյումրու, Վանաձորի, Հայաստանի Հանրապետության մյուս բնակավայրերի մշտական բնակիչներն էին: Նրանք չեն ցանկանում Հայաստանի հետ գոնե հոգեւոր կապը կտրել:

Ու, ահա, այս մարդիկ, ովքեր մի քանի տարի առաջ ուշադրությամբ հետեւում էին հենց Հրանտ Թոխատյանի տեսաֆիլմերին, այսօր դրա առավել մեծ պահանջն ունեն: Ուստի զարմանալի չէ, որ «Մեր բակի», «Խաթաբալադայի» կամ մյուս տեսաձայնագրություններն ունենալու մեծ ցանկություն ունեն: Հայն ուր էլ գնա, ցանկանում է պահել ազգային ինքնագիտակցությունը, հատկապես զավակների միջոցով: Ու այս դեպքում անչափ կարեւորվում է «Մեր այբբենարանը» տեսաերիզը: Հասկանալի է, որ կեղծ, վերաձայնագրված, նույնիսկ տեխնիկական վատ վիճակով այդ տեսաերիզները գտնում են իրենց գնորդին: Հենց այդտեղ՝ ԱՄՆ-ում, Ռուսաստանում մեծ ու անվերահսկելի շուկա կա:

Հրանտ Թոխատյանը չէ, նրանից հազարապատիկ հզոր, իշխանական եւ իրավապահ մարմիններում ամենազոր մեջք ու թիկունք ունեցող շատ արվեստագետներ էլ չեն կարող պայքարել այս ավազակության դեմ, եթե, իհարկե, շահեր եւ գրգռություններ ունեն: Չպիտի մոռանանք նաեւ, որ տուն պահելու, սնվելու, ծխելու, խմելու խնդիր կա: Հրանտ Թոխատյանն այս վերջին պարագայի վրա ուշադրություն չի դարձնում. կարող է ծայրահեղ խենթ լինել (այսինքն՝ արվեստի նվիրյալ) ու իր գործն անել, իր նպատակն իրականացնել մինչեւ վերջ:

- Այժմ «Մեր այբբենարանի» ստեղծման աշխատանքները մոտենում են ավարտին,- ասում է Հրանտը:- Մնացել է նկարահանել ու մոնտաժել միայն վերջին, եզրափակիչ մասը: Սակայն մենք ու ֆիլմը շատ կշահեինք, եթե գոնե մանկավարժ-խորհրդականներ ունենայինք մեր կողքին: Ավաղ, նրանք նույնպես չկային: Նկարահանող խմբի հետ չհամագործակցեց նաեւ պետական որեւէ կառույց, համակարգ, հատկապես՝ մանկավարժական ոլորտից...

Ամեն դեպքում աշխատանքը բարձր է գնահատվում երեխաների ու մանկավարժների կողմից: Գուցե դրա ապացույցն են նաեւ այն բազմահազար կրկնօրինակված, կեղծ ժապավենները, որոնք վաճառվում են շուկայում: (Ամեն դեպքում ասենք, որ այդ տեսահոլովակները բժշկական տեսակետից խիստ վնաս են մարդու առողջությանը): Տարբեր գերատեսչություններում (ներքին գործերի, ազգային անվտանգության նախարարություններ, մաքսային եւ հարկային ծառայություններ) փորձեր արեցին այս ավազակության դեմ պայքարելու խմբեր ստեղծել: Բայց ոչ մի արդյունք դա չի տվել դեռեւս...

...Մեր զրույցը Հրանտ Թոխատյանը չցանկացավ ավարտել տխուր տոնայնությամբ, թախծոտ նոտայով: Նա ստեղծագործական նոր ծրագրեր ունի, շատ բան էլ արվել է: Բայց նա չի շտապում ամեն մի հրավերի արձագանքել:

- Իհարկե, հրավերներ կան, բայց ինձ համար առավել կարեւոր է բեմադրության, կինոֆիլմի, տեսանյութի, անգամ ամենափոքր սկեչի գեղարվեստական բարձր մակարդակը: Ես առայժմ սերտ համագործակցության մեջ եմ գրող, սցենարիստ Վահրամ Սահակյանի եւ ռեժիսոր Արթուր Սահակյանի հետ, ու շատ գոհ եմ մեր այս համագործակցությունից: Կարծում եմ, որ մենք մեր հանդիսատեսին կրկին ուրախացնելու առիթ կստեղծենք:

Սպասենք Հրանտ Թոխատյանի նոր հրանտներին:

ՄԵՐԳԵՆ ԳԱԼՍՅԱՆ

ԳԻՏԱԺՈՂՈՎ

Լեւոն Հախվերդյան գիտնականի եւ մարդու հիշատակին

1999 դեկտեմբերին Լեւոն Հախվերդյանը, երբ արդեն չարագույժ հիվանդությունը սկսել էր թակել կյանքի դարտուները՝ նախանշելով հեռագա օրերի ընթացքը, իր խորհրդածություններից մեկում դիմում է մեծերի փորձին՝ հոգի. Թումանյանի հրաժեշտի բանաստեղծական տխրությանը.

«Հազար տարով, հազար դարով առաջ թե հետ, ի՞նչ կա որ,
Ես եղել եմ, կամ, կըլինեմ հար ու հավետ, ինչ կա որ,
Հազար խորեն ձեւեր փոխեմ, ձեւը խաղ է անցագոր,
Ես միշտ հոգի, տիեզերքի մեծ հոգու հետ՝ ի՞նչ կա որ»:

Թումանյանի հետ ունեցած հոգեհարազատությունն է թույլ տվել գիտնականին այսպես երկխոսելու ամենայն հայոց բանաստեղծին, ասելու, թե «բախտավոր է նա, ով արժանապես ապրել է իրեն տված մի հատիկ կյանքը եւ հրաժեշտ տվել նրան Թումանյանի պես անքեն, պայծառ ու անհոգ»: Մտորումներն ավարտելով իր ապրած կյանքի նման պարզ, անկեղծված ու անմիջական գրում է «Ես չգիտեմ, թե ինչ իրավունք ունեմ ուրիշների սխանչելի խոսքերով ավարտելու իմ անցած ճամփան՝ հետ նայելիս: Բայց այդպես դուրս եկավ՝ ի՞նչ կա որ...»:

20-րդ դարավերջի հայ մշակութային կյանքի ամենանշանավոր դեմքերից Լեւոն Հախվերդյան արվեստագետի գործունեությունը եւ նկարագրի ինքնատիպությունը դրսեւորվել է ժամանակների մեջ: Լեւոն Հախվերդյանի գրականագիտական, թատերագիտական, լեզվաբանական, հրապարակախոսական բազմաժանր եւ արգասաբեր գործունեությունը հայ մշակութային անդաստանում պատկառելի ժառանգություն է կազմում. «Մեր օրերի հայ դրամատուրգիան», «Կլասիկան եւ մեր օրերը-Վարդան Աճեմյանի արվեստը», «Թումանյանի աշխարհը», «Հայ թատրոնի պատմություն», Պարույր իմ հուշերում, իր նամակներում ու գործերում», «Զրույցներ լեզվի մասին»՝ հեղինակային, եւ թարգմանական՝ Կուն «Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները», Ս. Ցվայգ «Մարդկության աստղային ժամերը», Կոկլենավագ «Դեռատանի արվեստը» եւ բազմաթիվ գրքեր:

Մեկ տարուց ավելի է, որ անվանի գիտնականը հրաժեշտ տվեց կյանքին ու իր մտերիմներին: Ակադեմիկոս Լեւոն Հախվերդյանի ծննդյան 80-ամյակը հիշատակվեց ՀՀ ԳԱԱ-ի կազմակերպությամբ հոբելյանական նիստով, որը տեղի ունեցավ երեկ ակադեմիայի նախագահության նիստերի դահլիճում: Ֆադեյ Սարգսյանի բացման խոսքը շարունակեց արվեստի ինստիտուտի տնօրեն Առարատ Աղասյանը՝ Լեւոն Հախվերդյան թատերագետին, գրականագետին, ազգային մշակույթի ոգով ապրող արվեստաբանին, ժամանակի զարկերակով տրոփող հրապարակագրին, մարդկային շիտակ նկարագրի տեր անձնավորությանը ներկայացնելով բազմաբովանդակ, տարաբնույթ գործունեությամբ:

Լեւոն Հախվերդյանի՝ իր աշխատակիցների հետ մի հանդիպման ձայնագրությունը կենդանի հիշողություններ արթնացրեց ներկաների մեջ: Իրեն բնորոշ պարզությամբ ու անմիջականությամբ խոսում էր դիվանագիտության, դաղափարականության, մշակույթի, սփյուռքի, անկախության մասին, զարմանում՝ մի՞թե անկախությունը (ազատությունը) այսքան սրիկա կարող է ծնել: Բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը տկարության պատճառով չէր ներկայացել, նրա խոսքը փոխանցեց Սվետլանա Խանումյանը: Տարիների մտերմության հիշողություններից բանաստեղծուհին ուրախ խոսք էր հղել ներկաներին, իր ափսոսանքը հայտնելով հայերեն լեզվին այնքան նախանձախնդիր, պերճախոս դասականին, հմուտ կազմակերպչի, ժողովրդական բառ ու բանի գիտակ, կենսասեր մարդու աշխարհից հեռանալու համար: «Մեր հիշողությունների զարկերակում նա գրքերի հետ ապրելու է նաեւ իր ազնիվ կերպարը»:

Վարազդատ Հարությունյանի, Ազատ Եղիազարյանի, Լեւոն Անանյանի, Երվանդ Ղազանչյանի, Վասիկ Գրիգորյանի խոսքերում հիացմունքի ու գնահատանքի այս նույն երանգն էր իշխում: Լեւոն Հախվերդյանի մասին պատմած հուշերի պատառիկներով ներկաները փորձեցին ամբողջացնել բազառիկ կոլորիտով՝ հումորով, զվարճաբանությամբ, դիտողականությամբ, անդիմադրելի հմայքով օժտված հայ մարդու նրա կերպարը: «Ոչ մի բեմադրիչ հանգիստ չէր, երբ Լեւոն Հախվերդյանը դահլիճում էր, որեւէ դիտարկում, որեւէ վերաբերմունք, կտրուկ հիմնավորված էր, նախանձախնդիր թատերական մշակույթին: Նրա գրիչը մեր թատրոնների սղեղանին եղավ, ինչքան ենք լսում գանգրածակ բառերի կույտի շերտով այսպես կոչված խորհուրդներ, իսկ վարպետի խոսքը չպարտադրվող, օգտակար, անհրաժեշտ, արտաքուստ պարզ թվացող ճշմարտությունների մասին էր: Անվիճելիորեն հայ մշակույթի երախտավորների առաջին շարքում է Լեւոն Հախվերդյանը», իր խոսքում ասաց Երվանդ Ղազանչյանը: Լեւոն Հախվերդյանի որդին՝ կինոռեժիսոր Գագիկ Հախվերդյանը մոր՝ տիկին Սոնայի հորդորանքով հուշեր պատմեց իրենց ընտանիքի մասին եւ հոր կյանքից. «Այստեղ խոսում եք Լեւոն Հախվերդյանի մասին իբրեւ գիտնականի, ակադեմիկոսի, ինձ համար նա պարզապես հայր էր»:

Ակադեմիկոսի ծննդյան 80-ամյակին նվիրված գիտաժողովը պատմության ինստիտուտի նիստերի դահլիճում կսեփ նոյեմբերի 2-4-ը ճարտարապետության եւ կերպարվեստի, երաժշտության, թատրոնի եւ կինոյի մասնաճյուղերում:

ՄԵԼՈՆԻԱ ԲԱԳԱԼՅԱՆ

ՄԱՏՐԻՍԿԿԱՐՅԻ ԱՅԲԵՐՈՎ

Բրոնզե պարգևների համար մրցակռիվը շարունակվում է

«Միկան» արծաթե մեդալակիր

Ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության նախավերջին տուրը որոշեց արծաթե մրցանակակրին: Աշտարակի «Միկան» Գյումրիում ոչ-ոքի (0-0) ավարտելով հանդիպումը «Շիրակի» հետ, անհասանելի դարձավ հետաքրքրողների համար եւ իր պատմության մեջ առաջին անգամ դարձավ մրցանակակիր, որի առթիվ շնորհավորում ենք ֆուտբոլիստներին, մարզչական կազմին ու ակումբի ղեկավարությանը: Իսկ ահա բրոնզե մեդալների համար մրցավեճը շարունակվում է եւ առաջնության վերջնագծում հասել է իր գագաթնակետին: Այդ պայքարում չափազանց կարեւոր նշանակություն ունեին հերթական տուրի «Արարատ»-«Կոտայք» եւ «Բանանց»-«Փյունիկ» հանդիպումների ելքերը: Ավելի դժվարին էր «Արարատի» խնդիրը, քանի որ նրա մրցակիցը կենաց-մահու պայքար է մղում բարձրագույն խմբում իր տեղը պահպանելու համար: Արարատցիների հետ հանդիպումն անցավ բավական սուր եւ անզիջում պայքարում: Դատի տերերը նկատելի խաղային եւ տարածքային առավելություն ունեին, սակայն երկար ժամանակ նրանց չէր հաջողվում դա վերածել գոլի, քանի որ «Կոտայքը» հստակորեն էր պաշտպանվում:

Միայն երկրորդ խաղակեսում արարատցիներին ի վերջո հաջողվեց գրավել «Կոտայքի» դարպասը: Դիպուկ հարվածով այդի ընկավ թիմի լեգեոներ Էմանուել Էզուկամը: Բաց թողած գոլից հետո կոտայքցիները դիմեցին վճռական գրոհների: Խաղավերջում նրանք երկու վտանգավոր պահ ստեղծեցին «Արարատի» դարպասին, սակայն հաջող խաղաց դարպասապահ Ռադաջան: Իրենց հերթին արարատցիներն էլ կարող էին ավելացնել հաշիվը, սակայն հարմար դիրքերից վրիպեցին Սուլաբերիձեն եւ Մինասյանը: «Արարատն» անչափ կարեւոր հաղթանակ տոնեց եւ շարունակում է պայքարը բրոնզե մեդալների համար:

Արարատցիների գլխավոր հակառակորդները՝ «Բանանցի» ֆուտբոլիստները հյուրընկալել էին երկրի նորընծա չեմպիոն «Փյունիկին», որը մինչ այդ 16 անընդմեջ հաղթանակ էր տոնել: Ակնկալվում էր, որ «Բանանցի» հետ խաղում էլ փյունիկցիները կջանան շարունակել իրենց հաղթաշարը, իսկ թիմի հարձակվողներ Եդգար Մանուչարյանն ու Գալուստ Պետրոսյանը կփորձեն ավելացնել իրենց խփած գոլերի քանակը: Սակայն ի զարմանս շատերի, «Փյունիկի» մարզիչներն առաջնության գլխավոր ռմբարկուի կոչման համար պայքարող երկու ֆուտբոլիստներին էլ չէին հայտավորել հանդիպմանը: Բնականաբար, այդ խաղում միավորներն անհրաժեշտ էին միայն «Բանանցին» եւ վերջինս հասավ իր նպատակին: Թեեւ առաջինը հաշիվը բացեցին փյունիկցիները (39-րդ րոպեին 11 մ հարվածը հստակ իրացրեց Կարեն Ալեքսանյանը), սակայն 6 րոպե անց «Բանանցի» ռմբարկու Սամվել Մելքոնյանը վերականգնեց հավասարակշռությունը: Ընդմիջումից հետո հաշվի մեջ փոփոխություն մտցնելու ֆուտբոլիստների բոլոր ջանքերն ապարդյուն անցան:

Այսպիսով, 3-րդ տեղի համար մրցապայքարում վերջին տուրից առաջ բավական հետաքրքրական իրավիճակ է ստեղծվել: Այդ պայքարում վճռորոշ կարող է լինել ավարտական տուրում «Արարատի» եւ «Բանանցի» միջեւ կայանալիք հանդիպումը: Նկատենք, որ «Բանանցը» դեռեւս մեկ հետաձգված խաղ ունի անցկացնելու «Միկայի» հետ, որի ժամկետը դեռեւս հայտնի չէ: Բացառված չէ, որ բրոնզե մեդալների տիրոջը որոշելու համար հարկ լինի հաշվի առնել «Արարատի» եւ «Բանանցի» միջեւ անցկացված հանդիպումների արդյունքները եւ նույնիսկ առաջնությունում թիմերի խփած գոլերի ընդհանուր քանակը: Այնպես որ, ֆուտբոլասերներին առաջնության բավական հետաքրքրական վերջաբան է սպասվում:

Բարձրագույն խմբում տեղը պահպանելու համար պայքարում անչափ կարեւոր հաղթանակ տոնեց «Կիլիկիան», որն Աբովյանում հաղթեց առաջնության նկատմամբ իր հետաքրքրությունը կորցրած «Դինամո-Զենիթին»: Հետաքրքրական է, որ հաղթական գոլի հեղինակը վերջինիս նախկին ֆուտբոլիստ Սարգիս Նազարյանն է, որը գոլով նշանավորեց ՀՖ առաջնություններում իր հոբելյանական՝ 250-րդ խաղը:

Մրցաշարային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Փյունիկ	25	21	4	0	86–22	67
2. Միկա	25	14	7	4	36–22	49
3. Բանանց	26	12	6	8	39–34	42
4. Արարատ	27	12	6	9	39–32	42
5. Դ.-Զենիթ	26	7	6	13	21–47	27
6. Շիրակ	27	4	9	14	26–46	21
7. Կիլիկիա	26	6	4	16	29–47	22
8. Կոտայք	26	4	6	16	25–51	18

Ռմբարկուները

Գալուստ Պետրոսյան	«Փյունիկ»	21
Եդգար Մանուչարյան	«Փյունիկ»	20
Նշան Էզրոմյան	«Կիլիկիա»	16
Լեւոն Փաչաջյան	«Փյունիկ»	13
Արմեն Շահգելդյան	«Միկա»	11

Կուտերը գլխավորեց «Մալյորկան»

Իսպանական առաջնությունում անհաջող հանդես եկող «Մալյորկայի» ղեկը ստանձնեց 48-ամյա արգենտինացի մասնագետ Հեկտոր Կուտերը: Նա գլխավոր մարզչի պաշտոնում փոխարինեց թիմից հեռացված Բենիտո Ֆլորոյին: Նշենք, որ Կուտերը 1997-99 թթ. արդեն մարզել էր «Մալյորկան» եւ նրա գլխավորությամբ թիմը հասել էր նշանակալի հաջողությունների՝ մտնելով Իսպանիայի գավաթի եւ գավաթակիրների գավաթի խաղարկությունների եզրափակիչ, իսկ երկրի առաջնությունում գրավելով երրորդ տեղը: Հմուտ մասնագետը 1997 թ. տեղափոխվելով «Վալենսիա», հաստատեց իր բարձր կարգը նաեւ այս թիմում՝ 2 անգամ իսպանական ակումբին դուրս բերելով չեմպիոնների լիգայի եզրափակիչ: Ճիշտ է, երկու դեպքում էլ «Վալենսիային» չէր հաջողվել նվաճել պատվավոր մրցանակը՝ զիջելով համապատասխանաբար Մադրիդի «Ռեալին» եւ Մյունխենի «Բավարիային»: Նրա հաջող մարզչական հաջող գործունեությունը կապված է Միլանի «Ինտերի» հետ: 2001 թ. նրա գլխավորությամբ «Ինտերը» հիանալի հնարավորություն ուներ նվաճելու Իտալիայի չեմպիոնի կոչումը, սակայն ավարտական տուրում անսպասելիորեն պարտվեց «Լացիոյից» եւ զրկվեց ոսկե մեդալներից: Նա «Ինտերում» աշխատեց մինչեւ անցյալ տարվա դեկտեմբեր, որից հետո ակումբի ղեկավարությունը հրաժարվեց փորձառու մարզչի ծառայություններից: Այդ ընթացքում Կուտերը գործազուրկ էր, չնայած տարբեր ակումբներից ունեցած առաջարկություններին:

Երեքը մրցանակակիր

Տաշքենդում ավարտված սամբո ըմբշամարտի աշխարհի երիտասարդական եւ պատանեկան առաջնություններից մեդալներով տուն վերադարձան մեր մարզիկները: Երիտասարդների մրցաշարում Վանաձորի օլիմպիական հերթափոխի մարզադպրոցի սան Լաեռս Ավագյանը 82 կգ քաշային կարգում անցկացրած 8 մենամարտերից հաղթելով 6-ում, դարձավ բրոնզե մրցանակակիր: Իրենց թիմակցից հետ չմնացին նաեւ գյումրեցիներ Հովհաննես Մալխասյանն ու Արթուր Վարդանյանը, որոնք եւս կանգնեցին պատվո պատվանդանի երրորդ աստիճանին:

Զոլան պարգեւատրվել է շքանշանով

Իտալացի հանրահայտ հարձակվող, Լոնդոնի «Չելսիի» նախկին ֆուտբոլիստ Զանֆրանկո Զոլան, որն Անգլիայի պրեմիեր լիգայում հանդես է եկել 7 տարի, պարգեւատրվել է «Բրիտանական կայսրության» շքանշանով: Պարգեւատրման հանդիսավոր արարողությունը տեղի է ունեցել Հռոմում: Նա այդ պարգեւին արժանացել է ֆուտբոլում հասած մեծ նվաճումների համար:

ԿՈՆՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԳԱՎԱԹ

Վիճակահանությունն անվանեց մրցակիցներին



Ֆրանկֆուրտում կայացել է կոնֆեդերացիայի գավաթի խաղարկության վիճակահանությունը: Ինչպես հայտնի է, ՖԻՖԱ-ի հովանու ներքո անցկացվող այդ մրցաշարին մասնակցում են տարբեր աշխարհամասերի չեմպիոնները, կազմակերպիչ երկրի թիմն ու աշխարհի չեմպիոնը: Վիճակահանությամբ 8 հավաքականները բաժանվել են 2 խմբի: Առաջինում ընդգրկվել են Բրազիլիայի, Հունաստանի, Ճապոնիայի եւ Մեքսիկայի հավաքականները, 2-րդում՝ Գերմանիայի, Արգենտինայի, Ավստրալիայի եւ Թունիսի ընտրանիները: Խմբային մրցաշարի արդյունքներով յուրաքանչյուր խմբից 2 լավագույն թիմերը կշարունակեն պայքարը կիսաեզրափակիչում:

Մրցաշարը կմեկնարկի 2005 թ. հունիսի 15-ին Գերմանիայի եւ Ավստրալիայի հավաքականների մրցախաղով: Այդ խաղը կանցկացվի Ֆրանկֆուրտի նորակառույց «Վալդշտադիոն» մարզադաշտում, որտեղ հունիսի 29-ին տեղի կունենա նաեւ եզրափակիչ հանդիպումը: Բացի Ֆրանկֆուրտից, կոնֆեդերացիայի գավաթի խաղարկության մրցախաղեր կանցկացվեն նաեւ Լայպցիգում, Հաննովերում, Նյուրնբերգում եւ Քյոլնում: Կթողարկվի 700 հազար տոմս: Ամենաէժան տոմսերը կարժենան 17 եվրո, իսկ ամենաթանկը կլինեն եզրափակիչ խաղի տոմսերը (99 եվրո):

Ինչպես հայտնի է, կոնֆեդերացիայի գավաթի խաղարկության նկատմամբ ազգային ֆեդերացիաների վերաբերմունքը հիմնականում բացասական է: Այս մրցաշարը համարում են ավելորդ ծանրաբեռնվածություն ֆուտբոլիստների համար: Սակայն չնայած դժգոհություններին, այնուամենայնիվ, արդեն 5-րդ անգամ է վիճարկվելու կոնֆեդերացիայի գավաթը: Պատվավոր մրցանակի առաջին խաղարկությունը կայացել է 1997 թ. Սաուդյան Արաբիայում եւ ավարտվել բրազիլացիների հաղթանակով: 1999 թ. հաջողությունն ուղեկցել է մեքսիկացիներին, իսկ վերջին երկու խաղարկություններում ուժեղագույնն է ճանաչվել Ֆրանսիայի ընտրանին: 2003 թ. Ֆրանսիայում կայացած մրցաշարը ողբերգական ավարտ ունեցավ: Եզրափակիչ խաղում հանկարծամահ եղավ Կամերունի հավաքականի կիսապաշտպան Մարկ Վիվյեն Ֆոեն: Ֆրանկֆուրտում կայացած վիճակահանության ժամանակ կազմկոմիտեի նախագահ Ջակ Բլեյզերը հույս է հայտնել, որ մրցաշարը ֆուտբոլասերների կողմից մեծ ուշադրության կարժանանա:

Շեսը թողնում է կորտը

2005 թ. հունվարին Մելբուռնում կայանալիք թենիսի Ավստրալիայի բաց առաջնությունը ավստրիացի թենիսիստուհի Բարբարա Շեսի համար կլինի վերջինը նրա մարզական կենսագրությունում: Իսկ մեծ սպորտին հրաժեշտ տալու հանդիսավոր արարողությունն արդեն կայացել է օրերս ավստրիական Լինցում ավարտված թենիսի մրցաշարի ժամանակ, որում հաղթող ճանաչվեց ֆրանսիացի թենիսիստուհի Ամելի Մորեսմոն: Իսկ Շեսն այդ մրցաշարում հանդես եկավ զուգախաղում, որտեղ ընկերակցելով իր հայրենակցուհի Պատրիցիա Վարտուշին, կիսաեզրափակիչում պարտվեց Լիխովցեւա-Հուսարովա զույգին:

28-ամյա Բարբարա Շեսը մենախաղում հաղթող է ճանաչվել երեք մրցաշարում, իսկ զուգախաղում շահել է 10 մրցաշար: Թենիսիստուհիների համաշխարհային դասակարգման ցուցակում նրա լավագույն արդյունքը զբաղեցրած 7-րդ հորիզոնականն է:

Ազմայփարաշվիլին ազատվել է բանտից

Նախորդ համարում տեղեկացրել էինք, որ իսպանական ոստիկանությունը ձերբակալել է Վրաստանի շախմատի ֆեդերացիայի նախագահ, ՖԻԴԵ-ի փոխնախագահ Զուրաբ Ազմայփարաշվիլուն: Ջեռնարկված միջոցառումներով վրաց շախմատիստն ազատվել է բանտից: Նա պետք է բժշկական փորձաքննության ենթարկվի, քանի որ մարմնի վրա ֆիզիկական բռնությունների հետքեր կան: Ըստ նախնական տվյալների, Ազմայփարաշվիլուն ոստիկանական տեղամասում ծեծել էին:

«Բենֆիկան» հրավիրում է Պելեի հետնորդին

Լիսաբոնի «Բենֆիկան» թիմ է հրավիրել բրազիլական «Սանթոսի» 20-ամյա հարձակվող Ռոբսոն դե Սոուզային, որը ֆուտբոլասերների շրջանում ավելի շատ հայտնի է Ռոբինյո անվամբ: Ֆուտբոլի արքա Պելեն վերջինիս համարում է Բրազիլիայի ուժեղագույն երիտասարդ ֆուտբոլիստը եւ իր հետնորդը: Ռոբինյոն «Բենֆիկայի» շարքերը կհամալրի հունվարին: Երիտասարդ ֆուտբոլիստը 5-ամյա պայմանագիր է կնքել Պորտուգալիայի ամենաշահութաբեր ակումբի հետ: Ռոբինյոյով հետաքրքրվում էին նաեւ հոլանդական «Էյնդհովենը» եւ Լոնդոնի «Չելսին», սակայն բրազիլացի ֆուտբոլիստը նախընտրեց «Բենֆիկան», քանի որ, ըստ նրա, ինքը մշտական տեղ կունենա թիմի հիմնական կազմում: Բացի այդ, Պորտուգալիայում նրան անհրաժեշտ չի լինի օտար լեզու սովորել:

Կառլոսն ու Ռոնալդոն իսպանական քաղաքացիություն կստանան

Մադրիդի «Ռեալի» բրազիլացի լեգեոներներ Ռոբերտո Կառլոսն ու Ռոնալդոն մտադիր են իսպանական քաղաքացիություն ստանալ: «Մարկա» թերթի հաղորդագրության համաձայն, «արքայական» ակումբի ղեկավարությունը խնդրել է Ռոնալդոյին երկքաղաքացիություն ձեւակերպել, որպեսզի 2005/06 թթ. մրցաշրջանում թիմը հնարավորություն ունենա համալրվելու եւս մեկ լեգեոներով, որը Եվրոմիության կազմի երկրներից չէ: Իսպանական օրենքները բրազիլացիներին թույլատրում են երկքաղաքացիություն ստանալ երկրում երկու տարի բնակվելուց հետո, մինչդեռ այլ երկրների քաղաքացիներին դրա համար անհրաժեշտ է 5 տարվա մշտական բնակություն Իսպանիայում: Ռոնալդոն համաձայնել է Իսպանիայի քաղաքացիություն ստանալ եւ արդեն սկսել է անհրաժեշտ փաստաթղթերի հավաքագրումը:

Իսկ ահա Ռոբերտո Կառլոսն այդ գործընթացն ավելի վաղ էր սկսել եւ արդեն հաջորդ տարվա փետրվարին պետք է իսպանական անձնագիր ստանա: Կառլոսը շահագրգռված է դրանում, քանի որ «Ռեալի» հետ կնքած պայմանագրի համաձայն, եթե մինչեւ այս մրցաշրջանի ավարտը իսպանական քաղաքացիություն չստանա, ապա նրա աշխատավարձից 1 մլն եվրո կպահվի:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ՕՊԵՐԱՏԻՎ

Գայլերն ակտիվացել են նաեւ Լոռու գյուղերում

Հայաստանում զարմանալի իրողություններ են գրանցվում ոչ միայն հասարակական, այլեւ կենդանիների միջավայրում: Հոկտեմբերի 14-ին ատոմակայանի շրջակա արգելագոտում գայլերի ոհմակը 35 ոչխար խժռեց: Նույն ժամանակում ահազանգեր հնչեցին մայրաքաղաքի Ավան-Առինջ թաղամասի բնակիչներից, թե կեսգիշերին գայլերի ոռնոցներ են լսում:

Նախորդ տարի աշնանը Լոռու մի քանի գյուղերում օրը ցերեկով գայլեր հայտնվեցին: Այս տարվա աշնանն էլ լոռեցիներին այս կենդանիները տիաճ անակնկալներ մատուցեցին:

Մի քանի օր առաջ Գյուլագարակ գյուղի անտառում ցախ հավաքող մի գյուղացու վրա հարձակվել է գայլերի մի խումբ: Սարսափահար մարդուն հաջողվել է բարձրանալ բարձր ծառի վրա: Բայց նա սխրված է եղել ողջ գիշերն անցկացնել այնտեղ, մինչեւ առավոտյան կողմ գայլերը հեռացել են:

Մի այլ դեպք էլ պատմեցին Սվերդլով գյուղում: Գայլը հայտնվել էր հենց գյուղի կենտրոնում գտնվող տան շրջակայքում: Անկոչ հյուրի գալստյան մասին տանտերերն իմացան միայն առավոտյան: Նրանք զարթեցին, երբ հայտնաբերեցին, որ բակում կապած ավանակի հետույքը գայլը պոկել-տարել է:

Սովորաբար նման չափն անցած արարքների գայլերը դիմում են ձմռանը, երբ կեր հայթայթելը դժվարանում է: Բայց Հայաստանում գայլերն սկսել են ակտիվանալ արդեն աշնանից, հանգամանք, որ ոչ միայն գյուղացիների, այլեւ կենդանաբանների տարակուսանքն է հարուցում: Կ. Դ.

Դանակահարություններ

Ինչպես տեղեկացանք ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապի եւ լրատվության վարչության տրամադրած օպերատիվ տեղեկագրից, հոկտեմբերի 30-ին ոստիկանության Արտաշատի բաժին հիվանդանոցից հաղորդվել էր, որ կրթավանդակի մասում սուր կտրող-ծակող գործիքից ստացած վնասվածքով իրենց մոտ է տեղափոխվել Վարդան Մ.-ն: Նոյեմբերի 1-ին ոստիկանության աշխատակիցները մարմնական վնասվածք հասցնելու կասկածանքով բերման են ենթարկել 1972 թ. ծնված Արման Ք.-ին: Վերջինս հոկտեմբերի 30-ին Ազատավան գյուղի գերեզմանատան մոտ դանակահարել եւ մարմնական վնասվածք է պատճառել Վարդան Մ.-ին: Կատարվում է նախաքննություն:

Հոկտեմբերի 28-ին ոստիկանության Էրեբունու բաժին հիվանդանոցից հաղորդվել է, որ կրթավանդակի մասում ստացած կտրած-ծակած վերքով իրենց մոտ բուժօգնության է դիմել Լյուդվիգ Մ.-ն: Երկու օր անց ոստիկանության աշխատակիցները բերման են ենթարկել 1958 թ. ծնված Անդրանիկ Մ.-ին: Վերջինս Գաջագործների փողոցի տներից մեկի մոտ վիճաբանության ժամանակ հարվածել եւ մարմնական վնասվածք է պատճառել Լյուդվիգ Մ.-ին: Կատարվում է նախաքննություն: Մ. Մ.

ՀՀ Կենտրոնական բանկը 3.11.2004թ. ժ.9.00 ից սահմանում է արտարժույթի հետեւյալ հաշվարկային փոխարժեքները ու գնման եւ վաճառքի հետեւյալ գները.

ISO ի կոդը	Միավոր	Արտարժույթ	Հաշվարկային փոխարժեք	Գնում	Վաճառք
USD	1	ԱՄՆ դոլար	504.26	499.20	509.30
EUR	1	ԵՎՐՈ	640.66	636.80	644.50
RUR	1	Ռուս. ռուբլի	17.52	16.50	18.60

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

For Your Internal News of Armenia Log on to www.azg.am in Armenian, Russian, English and Turkish

ԱՌԱՋԻՆ ԼՈՒՐԸ՝ ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈ «ՌԱԴԻՈԼՈՒՐ»

լրատվական-վերլուծական ծրագիր ամեն օր՝ ուղիղ եթերում

Ժամը 6.00, 8.00, 10.00, 11.00, 12.00, 13.00, 14.00, 15.00 (հայերեն եւ ռուսերեն),17.00, 18.00, 22.00, 23.00

Օպերատիվ լրատվություն՝

On-line ռեժիմով *www.armradio.am*

Հայաստան Համահայկական Հիմնադրամ

Միասին անցնենք մեր հաղթանակների ճանապարհը

Դիտեք Հ 1 ուղիղ եթերում 25 նոյեմբերի 2004 թ. 20:00-ից

TELETHON2004 make it happen

Կատարեք Ձեր փոխանցումները հիմնադրամին՝ հետեւյալ հաշվեհամարներով.

ՀՀ կենտրոնական բանկ
Հաշվեհամար 103003215672 (AMD)
103003615673 (USD)
«Հայաստան» համահայկական հիմնադրամ

ԼՂՀ կենտրոնական բանկ
Հաշվեհամար 223001001559 (AMD)
«Հայաստան» համահայկական հիմնադրամ

HSBC Bank Armenia CJSC
ՀՀ ք.Երեւան, Վ.Սարգսյանի 9
Հաշվեհամար 001-002195-102 (USD)
001-002195-104 (EUR)
«Հայաստան» համահայկական հիմնադրամ

Կարող եք Ձեր վճարումները կատարել ՀՀ տարածքում գործող **ՀԱՅԽՆԱՅԲԱՆԿԻ ցանկացած մասնաճյուղում** առանց միջնորդավճարի գանձման:
ARCA և VISA քարտեր ունեցող քաղաքացիները 25 նոյեմբերի ժ. 20:00-ից սկսած կարող են հեռաձայնել «Հայաստան» համահայկական հիմնադրամ
56-09-95, 58-15-51, 56-01-06 հեռախոսահամարներով, նվիրատվությունները տեղում կատարելու համար:
Խնդրում ենք նշել Ձեր նվիրատվության նպատակը՝ «Հյուսիս-Հարավ» մայրուղու կառուցում:
Մենք շնորհակալ ենք Ձեր աջակցության համար

A STAR ALLIANCE MEMBER

Ճանկեք մղոններ "Miles & More" ծրագրով

սկսած՝ $ 559* Վիեննա եւ եվրոպական այլ քաղաքներ

սկսած՝ $ 859* Միացյալ Նահանգներ

սկսած՝ $ 899* Կանադա

սկսած՝ $ 1549* Ավստրալիա

* Գները դրամով, հարկերն ու տուրքերը ներառված չեն, գործում են հատուկ պայմաններ

Ուղեւորների առավել ճկուն տեղափոխության համար «Ավստրիական ավիաուղիներն» այժմ առաջարկում է շաբաթական իր 5-րդ թռիչքը:
Նոյեմբերի 1-ից սկսած Դուք կարող եք Երեւանից Վիեննա ուղեւորվել շաբաթվա բոլոր օրերին՝ բացի շաբաթ եւ կիրակի օրերից:
Այսուհետեւ Դուք կարող եք Երեւանից 559 դոլարով մեկնել Վիեննա եւ անվճար շարունակել ուղեւորությունը Եվրոպական 12 այլ քաղաքներ՝ Փարիզ, Լոնդոն, Ամստերդամ, Ֆրանկֆուրտ, Պրահա եւ այլուր:
Եվրոպայում ամենաարագ եւ հարմար փոխատեղման կենտրոնը՝ Վիեննայի օդանավակայանը հանդիսանում է Ձեր առաջին դադարատը դեպի եվրոպական այլ վայրեր, Հյուսիսային Ամերիկա, Ասիա եւ Ավստրալիա, միացնելով Ձեզ ավելի քան 130 քաղաքների հետ:
Վայելեք ավստրիական հյուրընկալությունը եւ թիզնես կարգում մեր մրցանակակիր ծառայությունները թռիչքի ողջ ընթացքում:

Հավելյալ տեղեկությունների համար դիմել մեր գրասենյակ՝ **www.austrianairlines.am, ☎ 51 22 01** կամ Ձեր նախընտրած ավիագործակալությանը:

Vienna International Airport VIE EUROPE'S BEST ADDRESS

Austrian

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-24-83

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիւ՝ 65, դասիչ՝ 69150 Տպաքանակը՝ 3000 Ստորագրած է տպագրության՝ 2.11.2004 Գինը՝ 100 դրամ